Сравнение антибактериальной активности образцов бузины на рост *E.coli* и *Staphylococcus aureus* показало, что сироп бузины, настоянный в темноте и краситель, полученный из плодов Бузины обладают высокой антибактериальной активностью на рост *E.coli* и умеренной на рост *Staphylococcus aureus*. Сок цветков бузины не влияет на рост *Staphylococcus aureus*, но обладает умеренной активностью по отношению *E.coli* (таблица 3.)

Как видим из таблицы 3, образцы бузины проявляют более высокую антибактериальную активность в отношении *E.coli* чем в отношении *Staphylococcus aureus*.

Таблица 3.

**Результаты сравнения антибактериальной активности Черной бузины
на рост бактерии *E.coli* и *Staphylococcus aureus* луночным методом
на среде Muller Hinton M173**

N/N	Черная бузина	<i>Staphylococcus aureus</i>	<i>E.coli</i>
1	сок бузины, настоянный при свете	+ временно	+
2	сироп бузины, настоянный при свете	-	+
3	сок бузины, настоянный в темноте	+ временно	++
4	сироп бузины, настоянный в темноте	+	++
5	сок цветков	-	+
6	краситель, полученный из плодов бузины	+	++

- не обладает

+ умеренная,

++ высокая,

Закключение.

Таким образом, образцы Бузины проявляют более высокую антибактериальную активность в отношении *E.coli*, чем в отношении *Staphylococcus aureus*. Влияние света приводит к снижению антибактериальной активности сока и сиропа бузины. Из исследованных образцов сироп бузины, настоянный в темноте и краситель, полученный из плодов Бузины обладают высокой антибактериальной активностью на рост *E.coli* и умеренной на рост *Staphylococcus aureus*.

DOI: <https://doi.org/10.58726/27382923-2025.1-68>

Литература

1. Варданян З., Григорян К., Овсепян В. Исследование антибактериальных свойств сока растения Бузины черной полученной из генеративных органов //ВГУ, Научные ведомости, Выпуск Б, 1, Ереван, 2021, 69-79 с.
2. Варданян З., Байрамян Л., Саакян Г., Мхитарян А. Способ приготовления настойки из растения Бузины черной. RU2597286, C12G 3/06,2006.
3. Alvarez C. A., Barriga A., Albericio F., Romero M. S., Guzmán Fanny, Identification of Peptides in Flowers of Sambucus nigra with Antimicrobial Activity against Aquaculture Pathogens, //Journal List, Molecules, v.23(5), 2018, p. 1033-1044.
4. Cioch M., Satora P., Skotniczny M., Semik-Szczurak D., Tarko T., Characterisation of Antimicrobial Properties of Extracts of Selected Medicinal

- Plants// Polish Journal of Microbiology, Vol. 66, No 4, 2017, p. 463-472.
5. CLSI, Performance Standards for Antimicrobial Disk Susceptibility Tests, Approved Standard, 7th ed., CLSI document M02-A11. Clinical and Laboratory Standards Institute, 950 West Valley Road, Suite 2500, Wayne, Pennsylvania 19087, USA, 2012.
 6. Costa P.C., Patinha S., Rudnitskaya A., Santos S.A., Silvestre A.J.D., Rocha S.M. Sustainable Valorization of *Sambucus nigra* L. Berries: From Crop Biodiversity to Nutritional Value of Juice and Pomace, //Biodiversity to Nutritional Value of Juice and Pomace. Foods, 11, 2022, p. 104.
 7. Daglia M. Polyphenols as antimicrobial agents, //Current Opinion in Biotechnology 23 (2), 2012, pp. 174-181.
 8. Djeuss D., Noumedem J., Seukep J., Fankam A., Voukeng I., Tankeo S., Nkuete A., Kuete V. Antibacterial activities of selected edible plants extract against multidrug-resistant. Gram-negative bacteria //BMC Complementary and Alternative Medicine 13, 2013, 164 p.
 9. Hearst C., McCollum G., Nelson D., Ballard L.M., Millar B.C., Goldsmith C.E., Rooney P.J., Loughrey A., Moore J.E., Rao J.R. Antibacterial activity of elder (*Sambucus nigra* L.) flower or berry against hospital pathogens // J. Med. Plant Res, 4, 2010, p.1805–1809.
 10. Hemaiswarya S., Kruthiventi A., Doble M. Synergism between Natural Products and Antibiotics against Infectious Diseases //Phytomedicine 15, 2008, p. 639-652.
 11. Ho G.T.T., Wangensteen H., Barsett H. Elderberry and elderflower extracts, phenolic compounds, and metabolites and their effect on complement, RAW 264.7 macrophages and dendritic cells. // Int. J. Mol. Sci, Volume 18, Issue 3, 2017, 584 p.
 12. Kong F. Pilot clinical study on a proprietary elderberry extract: efficacy in addressing influenza symptoms. //J Pharmacol Pharmacokinet, 5, 2009, p. 32–43.
 13. Sidor A., Gramza-Michalowska A. Advanced research on the antioxidant and health benefit of elderberry (*Sambucus nigra*) in food // J. Functional Foods, 18, 2015, p. 941–958.
 14. Veberic R., Jakopic J., Stampar F., Schmitzer V. European elderberry (*Sambucus nigra* L.) rich in sugars, organic acids, anthocyanins and selected polyphenols // Food Chem., 114, 2009, p. 511–515.
 15. Voon H. C., Bhat R., Gulam R., Flower Extracts and Their Essential Oils as Potential Antimicrobial Agents, // Comprehensive Rev in Food Science and Food Safety, 11 (1), 2012, p. 34-55.
 16. Zhivetev M.A., Rudicovskaya E.G. etc. Dynamics of Vitamins and Phenols of *Alchemilla subcrenata* by Diurnal Variation of Temperature in October // Jornal of Stress Physiology & Biochemistry, №1, 2016, p. 21–30.

Գեներատիվ օրգաններից ստացված թանթրվենի սև բույսի հյութի և օշարակի հակաբակտերիալ ակտիվության գնահատում

**Վարդանյան Զարուհի,
Հովսեփյան Վարդուհի,
Մխիթարյան Հասմիկ**

Ամփոփում

Հանգուցային բառեր: *Sambucus nigra L.*, *հակաբակտերիալ հատկություններ, E.coli, Staphylococcus aureus*, շտամ, թանթրվենու հյութ, թանթրվենու օշարակ

Վերջերս աճում է բուսական հումքից բնական հակամանրէային ակտիվ նյութերի ուսումնասիրությունների վերաբերյալ հետաքրքրությունը: Հակաբիոտիկների նկատմամբ կայունությունը հանգեցրել է նոր հակամանրէային նյութերի մշակման հրատապ անհրաժեշտությանը, և բնական աղբյուրներից բույսերը կարող են համարվել որպես լավ այլընտրանք: Կենսաբանորեն ակտիվ միացությունների աղբյուրներից մեկն է *Sambucus* ցեղից թանթրվենի սև տեսակը (*Sambucus nigra L.*):

Թանթրվենի սև տեսակի հյութի և օշարակի նմուշները, որոնք պահվել են մութ պայմաններում, ցուցաբերել են չափավոր հակաբակտերիալ ակտիվություն *Staphylococcus aureus* բակտերիայի շտամների վրա 50 մկլ քանակությունից սկսած: Թանթրվենու հյութը ցուցաբերում է չափավոր հակաբակտերիալ, իսկ օշարակը՝ բարձր հակաբակտերիալ ակտիվություն *E.coli* բակտերիայի աճի վրա:

Թանթրվենու նմուշները ցուցաբերում են ավել բարձր հակաբակտերիալ ակտիվություն *E.coli* նկատմամբ, քան *Staphylococcus aureus* նկատմամբ: Լույսի ազդեցությունը բերում է հյութի և օշարակի հակաբակտերիալ ակտիվության իջեցման: Ուսումնասիրված նմուշներից թանթրվենու օշարակը, թրմված մթության մեջ և ներկանյութը ստացված թանթրվենու պտուղներից օժտված են բարձր հակաբակտերիալ ակտիվությամբ *E.coli* և չափավոր *Staphylococcus aureus* վրա:

The Evaluation of the Antibacterial Activity of the Juice and Syrup of the Black Elderberry Plant Obtained from the Generative Organs

*Vardanyan Zaruhi,
Hovsepyan Varduhi,
Mkhitaryan Hasmik*

Summary

Key words: *Sambucus nigra L., anti-bacterial properties, E.coli, Staphylococcus aureus, strain, elderberry juice, elderberry syrup*

Recently, there has been a growing interest in the development of studies of natural antimicrobial active agents from plant raw materials. Antibiotic resistance has led to an urgent need to develop new and innovative antimicrobial agents and among potential sources, plants can be considered as a good alternative. One of the sources of biologically active compounds is Black Elderberry (*Sambucus nigra L.*) from the *Sambucus* genus. Studies of the Black Elderberry juice and syrup obtained infused in the dark showed a temporary moderate antibacterial activity in the amount of 50ml on the growth of the bacterium *Staphylococcus aureus*. Elderberry juice has a moderate antibacterial activity, and the syrup has even higher antibacterial activity on the growth of *E.coli* bacteria. Elderberry samples show higher antibacterial activity against *E. coli* than against *Staphylococcus aureus*. The influence of light leads to a decrease in the antibacterial activity of elderberry juice and syrup. Of the studied samples, elderberry syrup infused in the dark and the dye obtained from elderberries show high antibacterial activity on the growth of *E. coli* and moderate activity on the growth of *St. aureus*.

Ներկայացվել է 29. 03. 2025 թ.
Գրախոսվել է 15. 04. 2025 թ.
Ընդունվել է տպագրության 05. 06. 2025թ.

**Վանաձոր քաղաքի հարակից տարածքներում աճող
վայրի ուտելի որոշ բույսերում քլորոֆիլների և կարոտինոիդների
կոնցենտրացիաների որոշում**

**Վարդանյան Զարուհի,
Ղազարյան Արմինե**

DOI: <https://doi.org/10.58726/27382923-2025.1-78>

Հանգուցային բառեր. բուսական գունակներ, քլորոֆիլի օպտիկական խտություն, գունակների կոնցենտրացիա, բուսական մզվածք, լույսային ալիքի երկարություն, լույսի քվանտ, քլորոֆիլի սպիրտային լուծույթ

Ներածություն

Կենսաբանական գունակները (բիոքրոմները) – գունանյութեր են, որոնք մտնում են օրգանիզմների **հյուսվածքների** բաղադրության մեջ: Գունակների գույնը որոշվում է նրանց **մոլեկուլներում գունակիրների** առկայությամբ, որոնք ընտրողական կերպով կլանում են արեգակնային լույսի **տեսանելի սպեկտրի** ճառագայթները: Կենսաբանական գունակները կարևոր դեր են խաղում կենդանի էակների կենսագործունեության մեջ: Այդ գունակներից են քլորոֆիլները, անտոցիանները, կարոտինոիդները, ֆիկոբիլինները և այլն [2; 17]: Բուսական հյուսվածքներում գունակների՝ քլորոֆիլների և կարոտինոիդների առաջացումը օրգանական բնության ծագման պատմության ընթացքում եղել է խոշորագույն արոմորֆոզ, քիմիական և ապա նաև կենսաբանական էվոլյուցիայի բարձրագույն արդյունք: Գորշ, կապտականաչ, դիատոմային ջրիմուռների տարբեր տեսակների վրա կատարված բազմաթիվ հետազոտություններով ցույց է տրվել, որ կարոտինոիդները և ֆիկոբիլինները ֆոտոսինթեզի ակտիվ մասնակիցներ են (Էմիրսոնի և Լուիսի, Մոնֆորդի, Քերստենի, Ֆրենչի և այլոց աշխատանքները) [5]:

Գունակների օպտիկական հատկությունները որոշվում են դրանց քիմիական կառուցվածքի առանձնահատկություններով: Քլորոֆիլների և կարոտինոիդների մոլեկուլներում գոյություն ունի զուգակցված (կոնյուգացված) կրկնակի կապերի համակարգ: Համակարգի կմախքը կազմված է ածխածնի ատոմներից փոխկապակցված պարզ (երկէլեկտրոնային) կովալենտային կապերով՝ σ -էլեկտրոններ: Բացի σ -էլեկտրոններից, կրկնակի կապերի առաջացմանը մասնակցում են երկու π -էլեկտրոններ: Նման համակարգերում π -էլեկտրոնները կապված չեն ածխածնի հատուկ ատոմների հետ, ուստի՝ նրանք կարող են շարժվել ամբողջ մոլեկուլով՝ ձևավորելով տեղայնացված էլեկտրոնային ամպ: π -էլեկտրոնների գրգռումը կարող է իրականացվել տեսանելի լույսի քվանտների շնորհիվ [9, 16]:

Գրականության վերլուծությունից երևում է, որ արտասահմանյան և հայրենական շատ գիտնականներ ուսումնասիրել են քլորոֆիլների և կարոտինոիդների կոնցենտրացիան ու պարունակությունը բուսական հյուսվածքներում: Հետազոտվել է քլորոֆիլի կոնցենտրացիան և պարունակությունը ավելուկ սովորական և Թանթրվենի սև բույսերի տերևի հյուսվածքներում, ստացված տվյալները համեմատվել են միմյանց հետ [7]: Որոշվել է նաև որոշ վայրի ուտելի բույսերի ցողու-

նում քլորոֆիլի կոնցենտրացիան, գնահատվել է դրանցում ֆոտոսինթեզի ինտենսիվությունն ըստ քլորոֆիլի կոնցենտրացիայի [11]: Հեղինակների մեկ այլ խմբի կողմից ուսումնասիրվել է Լոռու և Տավուշի մարզերում աճող որոշ բույսեր տերևի հյուսվածքներում քլորոֆիլի կոնցենտրացիայի և պարունակության կախվածությունը աճելավայրի պայմաններից [8]:

Կատարվել են հետազոտություններ որոշ արևադարձային բույսերի պտուղներում և համեմունքային բույսերում կարոտինոիդների կոնցենտրացիան և պարունակության վերաբերյալ [6; 10; 22]:

Կանաչ բույսերի տերևներում քլորոպլաստների գունակների այդ մեծ խմբի ֆիզիոլոգիապես առավել ակտիվ բաղադրիչներն են α - և β - կարոտինները, ինչպես նաև նրանց թթվածին պարունակող ածանցյալները՝ քսանտոֆիլները, որոնց նույնպես կարոտինոիդներ են անվանում: Իբրև լրացուցիչ գունակներ՝ նրանք լույսի էներգիան կլանում և փոխանցում են քլորոֆիլ a -ին: Մթության մեջ բույսերի հյուսվածքներում կարոտինոիդների սինթեզն ավելի ակտիվ է ընթանում, իսկ լույսի տակ ճնշվում է [2; 5; 21]:

Կարոտինոիդների նոսր լուծույթներն ունեն բաց դեղին, նարնջագույն կամ բաց կարմիր երանգավորում: Խիտ լուծույթներն ունեն նարնջագույնից մինչև մուգ կարմիր գույն [2, 111-114; 5]:

Ըստ մի շարք հետազոտությունների արդյունքների՝ կարոտինոիդներն ունեն որոշակի դեր բույսերի ծաղկման շրջանում, դրանց քանակը համեմատաբար շատ է լինում վարսանդի սպիում և փոշեհատիկներում: Այդ ընթացքում կարոտինոիդների պարունակությունը տերևներում մասամբ նվազում է, իսկ փոշանոթներում և պսակաթերթերում՝ ավելանում [14]:

Կարոտինոիդները կարևոր նշանակություն ունեն մարդու օրգանիզմի ջրային հավասարակշռությունը պահպանելու տեսակետից: Ա վիտամինը մեր օրգանիզմը ձեռք է բերում կարոտինոիդների վերափոխակերպման արդյունքում: Օրական 6 մգ-ից պակաս կարոտինոիդներ օգտագործելու պարագայում մոտ երկու անգամ մեծանում է ուռուցքային հիվանդությունների զարգացման ռիսկը [26]:

Կարոտինոիդներն ունեն հակաուռուցքային, հակատոքսիկ, իմունոմոդուլյար ազդեցություն, և խորհուրդ է տրվում նրանց կիրառությունը կլինիկայում չարորակ գոյացությունների կոմբինացված բուժման ժամանակ որպես իմունոկարգավորիչներ [20]:

Ֆ. Խաչիկի (Frederick Khachik) կողմից իրականացված հետազոտությունները ցույց են տվել, որ կարոտինոիդների հավելումը սննդի մեջ կարևոր նշանակություն ունի հիվանդությունների կանխարգելման համար [19]: Կարոտինոիդները ազդեցություն են ունենում նաև բջիջներում խոլեսթերինի փոխանակություն կարգավորման վրա [15]:

Կարոտինոիդները ունեն հակաօքսիդանտային ակտիվություն և ազդում են բջիջների թաղանթների վրա [25]: Նրանք մասնակցում են բջջաթաղանթում սպիտակուցների կառուցվածքի մոդիֆիկացիային և ազդակների ընդունմանը [16; 17]:

Կարոտինոիդների ունեն խթանողազդեցություն իմունային համակարգի և ընկճող ազդեցություն ուռուցքների վրա [18; 23; 24] :

Հայաստանի Հանրապետությունում ևս կատարվել են հետազոտություններ կարոտինոիդների քանակական և որակական որոշ հատկանիշների ուսումնասիրման ուղղությամբ: Կատարվել են հետազոտություններ որոշ արևադարձային պտուղներում և որոշ համեմունքային բույսերում կարոտինոիդների պարունակության մասին [10; 22]:

Նյութը և մեթոդը

Գիտական և գործնական տեսանկյունից արժեքավոր են այն գիտական ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են որոշ վայրի ուտելի բույսերում գունակների կոնցենտրացիայի և պարունակության որոշմանը:

Գրականության վերլուծությունից երևում է, որ արտասահմանյան և հայրենական շատ գիտնականներ ուսումնասիրել են կարոտինոիդների պարունակությունը վայրի աճող ուտելի բույսերում, հետազոտել են դրանց նշանակությունը մարդու օրգանիզմի առողջության համար [19-22]:

Մեր կողմից իրականացվել է Լոռու մարզի Վանաձոր քաղաքի հարակից վայրի բնությունում աճող որոշ վայրի ուտելի բույսերի տերներում և ցողունում կարոտինոիդների կոնցենտրացիայի ուսումնասիրություն, որոնք ներառված են Լոռու մարզի բնակիչների սննդաբաժնում՝ ուրց սողացող (*Thymus serpyllum* L.), անանուխ հասկիկավոր (*Mentha viridis* L.), մայրամախոտ սպիտակ (*Teucrium polium* L.), ծիծեռնախոտ մեծ (*Chelidonium majus* L.), եղինջ երկտուն (*Urtica dioica* L.), սինդրիկ սովորական (*Polygonatum odoratum* (Mill) Druce), ծնեբեկ դեղատու (*Asparagus officinalis* L.), նեխուր բուրավետ (*Apium graveolens* L.), բալդրդան սովորական (*Heracleum sosnowskyi*), շուշանբանջար սոխուկավոր (*Chaerophyllum bulbosum* L.):

Գաղտնիք չէ, որ Լոռու մարզում ազգաբնակչության շրջանում ընդունված է սննդում օգտագործել վայրի բույսեր: Հատկապես զարնանը՝ բույսերի ինտենսիվ աճման ու զարգացման շրջանում, այդ բույսերի կիրառման հաճախականությունը զգալի մեծանում է: Ուստի, կարևորվում են Լոռու մարզում աճող վայրի ուտելի բույսերում քլորոֆիլի և կարոտինոիդների կոնցենտրացիայի և պարունակության ուսումնասիրությունները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բուսական այդ գունակների քանակի բացահայտումը նշանակալից կլինի մարդու օրգանիզմի վրա սննդում կիրառվող բույսերի օգտակարության գնահատման հարցում:

Փորձանմուշները վերցրվել են Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր քաղաքի հարակից տարածքներից:

Աղյուսակ 1-ում բերված են հետազոտվող տարածքների հիմնական կլիմայական ցուցանիշները [3-4]:

**Վանաձոր քաղաքի հետազոտված տարածքների կլիմայական
որոշ ցուցանիշների բնութագիրը**

Վայր	Ծովի մակար- դակից բացար- ձակ բարձ- րություն (մ)	Օդի առավե- լագույն բացար- ձակ ջերմաս- տիճան (°C)	Օդի տարե- կան միջին ջերմաս- տիճան (°C)	Արևափ այլի տևողությ ունը (ժ)	Օդի բացար- ձակ նվազա- գույն ջերմաս- տիճանը (°C)	Մթնո- լորտա- յին տեղում- ների տարե- կան միջին քանակ	Քամու տարե- կան միջին արագու- թյունը (մ/վրկ)
Վանա- ձոր	1350	36	7.4	2011	-32	586	1.7

Գունակների՝ քլորոֆիլների և կարոտինոիդների կոնցենտրացիան որոշվել է օպտիկական խտության միջոցով՝ սպիրտային և ացետոնային լուծույթների կիրառմամբ [12]: Բուսանմուշների քլորոֆիլի լուծույթները պատրաստվել են բույսերի ֆիզիոլոգիական հետազոտություններում կիրառվող մեթոդներով [1; 12]:

Գունակների օպտիկական խտությունը որոշվել է սպեկտրոֆոտոմետրի (*UV-Vis SPECTROPHOTOMETER SL150*) միջոցով քլորոֆիլը 665 նմ և 649 նմ, իսկ կարոտինոիդը՝ 452,5 նմ երկարության ալիքի տակ [12]: Սպեկտրոֆոտոմետրիա-
կան անալիզը տեքնիկներում գունակների որոշման համեմատաբար ավելի ճիշտ քանակական մեթոդ է:

Մզվածքի խտությունը սպեկտրոֆոտոմետրի վրա որոշում են a և b քլորոֆիլի կոդմից սպեկտրի կլանման առավելագույն տիրույթում՝ սպեկտրի կարմիր հատվածում, իսկ կարոտինոիդների դեպքում աբսորբցիոն առավելագույն ալիքի տակ: Հետազոտվող բույսերի ցողունում և տերևներում գունակների կոնցենտրացիան որոշելու համար վերցվել են 0,3 գ զանգվածով հետազոտվող բույսի թարմ հյուսվածքներ: Բուսական հյուսվածքներից պատրաստվել է քլորոֆիլի սպիրտային լուծույթ՝ 96 %-ոց սպիրտով [1, 50-52]:

Գունակների կոնցենտրացիան ըստ օպտիկական խտության ցուցանիշների որոշվել է ըստ հետևյալ բանաձևի [12, 43].

$$C_a = 13,70 \cdot D_{665} - 5,76 \cdot D_{649} \quad (1)$$

$$C_b = 25,8 \cdot D_{649} - 7,60 \cdot D_{665} \quad (2)$$

Քլորոֆիլ C_a -ի և քլորոֆիլ C_b -ի գումարը որոշվել է ըստ Ռեբբելենի բանաձևի [12, 43].

$$C_a + C_b = 6,10 \times D_{665} + 20,04 \times D_{649} \quad (3)$$

Կարոտինոիդների կոնցենտրացիան որոշվել է Վետտշտեյնի բանաձևով. [27]

$$C_{car} = 4.75 \times D_{452.5} - 0.226 \times C_a + C_b \quad (4)$$

Փորձերը կատարվել են Վանաձորի պետական համալսարանի Բնագիտական համալիր լաբորատորիայում: Ստացված արդյունքները ենթարկվել են մաթեմատիկական վիճակագրական վերլուծության: Տվյալների մաթեմատիկական մշակումը իրականացվել է դիսպերսիոն վերլուծության մեթոդով (փորձի սխալի (S_x) %) [13]:

Փորձեր և արդյունքներ

Նախապես Վանաձոր քաղաքի հարակից վայրի բնությունից հավաքվել են տասը տեսակի վայրի ուտելի և համեմունքային բույսերի՝ *Thymus serpyllum* L., *Mentha viridis* L., *Teucrium polium* L., *Chelidonium majus* L., *Urtica dioica* L.), *Polygonatum odoratum* (Mill) Druce), *Asparagus officinalis* L.), *Apium graveolens* L., *Heracleum sosnowskyi*, *Chaerophyllum bulbosum* L., ցողուն և տերևներ որպես փորձանմուշներ: Հավաքված բույսերի ցողունների և տերևների հյուսվածքներում որոշվել է գունակների կոնցենտրացիան:

Վանաձոր քաղաքի հարակից վայրի բնությունից հավաքված բույսերի ցողուններում և տերևներում գունակների կոնցենտրացիայի որոշման արդյունքները բերված են թիվ 2 աղյուսակում:

Հետազոտված բույսերի փորձանմուշներում ստացված տվյալները համեմատելիս յուրաքանչյուր դեպքի համար վերցվել են այն փորձանմուշների տվյալները, որոնցում գունակի կոնցենտրացիան եղել է առավելագույնը:

Ըստ աղյուսակ թիվ 2-ի, հետազոտված բույսերում քլորոֆիլ a-ի ամենաբարձր կոնցենտրացիան գրանցվել է սինդրիկ սովորական բույսի ցողունում՝ 7.4093մգ/լ, իսկ բալդրդան սովորական բույսում 6.9324 մգ/լ տերևներում:

Ըստ հետազոտված բույսերի ցողունում քլորոֆիլ a-ի գրանցված տվյալների՝ կազմվել է հետազոտված բույսերի շարք.

Polygonatum odoratum (Mill) Druce>*Thymus serpyllum* L.>*Heracleum sosnowskyi*>*Chaerophyllum bulbosum* L.>*Chelidonium majus* L.)>*Apium graveolens* L.)>*Mentha viridis* L.)>*Asparagus officinalis* L.)>*Teucrium polium* L.>*Urtica dioica* L.

Բույսերի շանքից երևում է, որ քլորոֆիլ a-ի նվազագույն կոնցենտրացիա ցողունում գրանցվել է եղինջ երկտուն բույսում, որը 1.67 անգամ քիչ է սինդրիկ սովորական բույսի ցողունում քլորոֆիլ a-ի կոնցենտրացիայից:

Փորձանմուշների տերևներում քլորոֆիլ a-ի ամենաբարձր կոնցենտրացիան որոշվել է բալդրդան սովորական (*Heracleum sosnowskyi*) բույսում՝ 6.9324 մգ/լ, իսկ ամենացածրը՝ մայրամախոտ սպիտակ (*Teucrium polium* L.) բույսում՝ 5.422 մգ/լ, այսինքն՝ գրեթե 1.278 անգամ քիչ:


Ըստ փորձանմուշների՝ տերևներում քլորոֆիլ a-ի կոնցենտրացիայի կազմվել է բույսերի շարք.

Heracleum sosnowskyi>*Mentha viridis* L. >*Polygonatum odoratum* (Mill) Druce)>*Apium graveolens* L.>*Chaerophyllum bulbosum* L.>*Chelidonium majus* L.>*Urtica dioica* L.>*Asparagus officinalis* L.>*Thymus serpyllum* L.>*Teucrium polium* L.:

**Քլորոֆիլների և կարոտինոիդների կոնցենտրացիան Վանաձորում աճող
հետազոտվող բույսերի տերևներում և ցորեններում**

Բույսի տեսակ	Բույսի օրգան-ները	Գունակների օպտիկական խտությունը տարբեր երկարության ալիքի տակ (նմ)		Ca մգ/լ	Cb մգ/լ	Ccar մգ/լ
		D _{652.5}	D ₆₆₉			
Ուրց սղազող (<i>Thymus serpyllum</i> L.)	ցորեն	1.274	0.952	7.093 ± 0.23	17.5848 ± 1.17	0.0225 ± 0.09
	տերև	1.268	0.794	5.66 ± 0.21	14.808 ± 0.13	1.3971 ± 0.11
Մայրամախտ ալիսակ (<i>Teucrium polium</i> L.)	ցորեն	1.126	0.712	5.0505 ± 0.18	13.0648 ± 0.32	1.1616 ± 0.16
	տերև	1.127	0.726	5.422 ± 0.20	13.4032 ± 0.25	0.346 ± 0.21
Ծնեթև դեղատու (<i>Asparagus officinalis</i> L.)	ցորեն	1.130	0.743	5.1596 ± 0.26	13.933 ± 0.33	1.0526 ± 0.23
	տերև	1.131	0.756	5.6876 ± 0.29	13.4772 ± 0.36	0.9377 ± 0.33
Անամուխ հասկի կավոր (<i>Mentha viridis</i> L.)	ցորեն	1.307	0.898	5.3354 ± 0.31	17.3392 ± 1.02	1.0838 ± 0.41
	տերև	1.312	0.912	6.7344 ± 0.42	16.8796 ± 0.98	0.8952 ± 0.38
Նվխար բուրավետ (<i>Apium graveolens</i> L.)	ցորեն	1.125	0.718	5.5639 ± 0.53	13.1436 ± 0.97	1.1159 ± 0.92
	տերև	1.132	0.805	6.2136 ± 0.67	14.7498 ± 1.13	0.6393 ± 0.85
Շուշնբլանդար սխուկավոր (<i>Chaerophyllum bulbosum</i> L.)	ցորեն	1.121	0.901	6.9484 ± 0.56	16.5122 ± 0.89	0.0226 ± 0.09
	տերև	1.150	0.843	6.1454 ± 0.77	15.6466 ± 0.78	0.5375 ± 0.05
Նիկնգ երկտուն (<i>Urtica dioica</i> L.)	ցորեն	1.130	0.698	4.3639 ± 0.25	13.3572 ± 0.87	1.3626 ± 0.69
	տերև	1.152	0.798	5.9799 ± 0.46	14.7212 ± 0.92	0.7936 ± 0.36
Ծիճոնխատ մեծ (<i>Chelidonium majus</i> L.)	ցորեն	1.130	0.914	6.8735 ± 0.58	16.8476 ± 1.03	0.0065 ± 0.03
	տերև	1.156	0.807	6.1199 ± 0.46	14.847 ± 0.78	0.7525 ± 0.45
Բալդոդան սովորական (<i>Heracleum sosnowskyi</i>)	ցորեն	1.312	0.923	6.9587 ± 0.85	17.0038 ± 1.06	0.8165 ± 0.83
	տերև	1.301	0.918	6.9324 ± 0.77	16.9052 ± 0.93	0.7924 ± 0.69
Սիկորիկ սովորական (<i>Polygonatum odoratum</i> (Mill) Druce)	ցորեն	1.142	0.821	7.4093 ± 0.86	14.4482 ± 1.02	0.4847 ± 0.75
	տերև	1.150	0.793	6.6389 ± 0.62	14.2426 ± 0.93	0.7433 ± 0.06

Վանաձորի հարակից տարածքներում աճող հետազոտված բույսերի ցողունում և տերևներում քլորոֆիլ a-ի կոնցենտրացիայի համեմատությունը բերված է թիվ 1 գծապատկերում:



Գծապատկեր 1. Վանաձորի հարակից տարածքներում աճող հետազոտված բույսերի փորձանմուշների ցողունում և տերևներում քլորոֆիլ a-ի կոնցենտրացիայի համեմատությունը

1. *Thymus serpyllum* L., 2. *Teucrium polium* L., 3. *Asparagus officinalis* L.,
4. *Mentha viridis* L., 5. *Apium graveolens* L., 6. *Chaerophyllum bulbosum* L.,
7. *Urtica dioica* L., 8. *Chelidonium majus* L., 9. *Heracleum sosnowskyi*,
10. *Polygonatum odoratum* (Mill.) Druce

Հետազոտված բույսերի նույն փորձանմուշներում համեմատվել է նաև ցողունում և տերևներում քլորոֆիլ a-ի կոնցենտրացիան միմյանց հետ: Պատկերն այսպիսին է.

Thymus serpyllum L. բույսի փորձանմուշի ցողունում քլորոֆիլ a-ի կոնցենտրացիան գերազանցում է տերևներում քլորոֆիլ a-ի կոնցենտրացիային 1.253 անգամ, *Teucrium polium* L.՝ տերևներում՝ 1.073, *Asparagus officinalis* L.՝ տերևներում 1.102, *Mentha viridis* L.՝ տերևներում 1.262, *Apium graveolens* L.՝ տերևներում 1.117, *Chaerophyllum bulbosum* L.)՝ ցողունում 1.131, *Urtica dioica* L.)՝ տերևներում՝ 1.370, *Chelidonium majus* L.՝ ցողունում 1.123, *Heracleum sosnowskyi*՝ ցողունում 1.003, *Polygonatum odoratum* (Mill.) Druce՝ ցողունում 1.116 անգամ:

Հետազոտված բույսերի փորձանմուշներում քլորոֆիլ b-ի կոնցենտրացիայի ամենաբարձր ցուցանիշ գրանցվել է *Thymus serpyllum* L. բույսի փորձանմուշի ցո-

դրոնում՝ 17.5848 մգ/լ, իսկ ամենից ցածր՝ *Teucrium polium* L. ցողունում՝ 13, 0648 մգ/լ:

Ըստ հետազոտված բույսերի փորձանմուշների՝ ցողունում քլորոֆիլ b-ի կոնցենտրացիայի կազմվել է բույսերի շարք.

Thymus serpyllum L.>*Mentha viridis* L.>*Heracleum sosnowskyi*>*Chelidonium majus* L.>*Chaerophyllum bulbosum* L.>*Polygonatum odoratum* (Mill) Druce>*Asparagus officinalis* L.>*Urtica dioica* L.>*Apium graveolens* L.>*Teucrium polium* L.:


Բույսերի շանքից երևում է, որ ցողունում քլորոֆիլ b-ի նվազագույն կոնցենտրացիա գրանցվել է *Teucrium polium* L. բույսում, որը քիչ է *Thymus serpyllum* L. բույսի ցողունում քլորոֆիլ b-ի կոնցենտրացիայից 1.346 անգամ:

Հետազոտված բույսերի փորձանմուշների տերևներում քլորոֆիլ b-ի ամենաբարձր կոնցենտրացիան որոշվել է *Heracleum sosnowskyi* բույսում՝ 16.9052 մգ/լ, իսկ ամենից ցածր՝ *Teucrium polium* L. բույսի տերևներում՝ 13.4032 մգ/լ:

Ըստ տերևներում քլորոֆիլ b-ի կոնցենտրացիայի ցուցանիշի կազմվել է բույսերի շարք.

Heracleum sosnowskyi>*Mentha viridis* L.>*Chaerophyllum bulbosum* L.>*Chelidonium majus* L.>*Thymus serpyllum* L.>*Apium graveolens* L.>*Urtica dioica* L.>*Polygonatum odoratum* (Mill) Druce>*Asparagus officinalis* L.>*Teucrium polium* L.:

Վանաձորի հարակից տարածքներում աճող հետազոտված բույսերի ցողունում և տերևներում քլորոֆիլ b-ի կոնցենտրացիայի համեմատությունը բերված է թիվ 2 գծապատկերում:



Գծապատկեր 2. Վանաձորի հարակից տարածքներում աճող հետազոտված բույսերի փորձանմուշների ցողունում և տերևներում քլորոֆիլ b-ի կոնցենտրացիայի համեմատությունը

1. *Thymus serpyllum* L.,
2. *Teucrium polium* L.,
3. *Asparagus officinalis* L.,
4. *Mentha viridis* L.,
5. *Apium graveolens* L.,
6. *Chaerophyllum bulbosum* L.,
7. *Urtica dioica* L.,
8. *Chelidonium majus* L.,
9. *Heracleum sosnowskyi*,
10. *Polygonatum odoratum* (Mill.) Druce

Հետազոտված բույսերի նույն փորձանմուշներում համեմատվել է նաև ցողունում և տերևներում քլորոֆիլ a-ի և b-ի կոնցենտրացիաները միմյանց հետ: Պատկերն այսպիսին է.

Thymus serpyllum L. բույսի փորձանմուշի ցողունում քլորոֆիլ b-ի կոնցենտրացիան գերազանցում է տերևներում քլորոֆիլ b-ի կոնցենտրացիային 1.187 անգամ, *Teucrium polium* L.՝ տերևներում՝ 1.026, *Asparagus officinalis* L.՝ ցողունում 1.033, *Mentha viridis* L.՝ ցողունում 1.027, *Apium graveolens* L.՝ տերևներում 1.072, *Chaerophyllum bulbosum* L.՝ ցողունում 1.055, *Urtica dioica* L.՝ տերևներում՝ 1.102, *Chelidonium majus* L.՝ ցողունում 1.135, *Heracleum sosnowskyi*՝ ցողունում 1.006, *Polygonatum odoratum* (Mill) Druce՝ ցողունում 1.014 անգամ:

Որոշվել է Վանաձորում աճող բույսերի փորձանմուշների ցողունում և տերևներում կարոտինոիդների կոնցենտրացիան: Կարոտինոիդների կոնցենտրացիայի ամենաբարձր ցուցանիշ որոշվել է *Thymus serpyllum* L. բույսի փորձանմուշի տերևներում՝ 1.3971 մգ/լ, իսկ ամենացածր՝ *Chelidonium majus* L. ցողունում՝ 0.0065 մգ/լ:

Ըստ հետազոտված բույսերի ցողունում կարոտինոիդների կոնցենտրացիայի աղ. 1-ում տրված տվյալների, կազմվել է բույսերի շարք.


Urtica dioica L.>*Teucrium polium* L.>*Apium graveolens* L.>*Mentha viridis* L.>*Asparagus officinalis* L.>*Heracleum sosnowskyi*>*Polygonatum odoratum* (Mill) Druce>*Chaerophyllum bulbosum* L.>*Thymus serpyllum* L.>*Chelidonium majus* L.:

Հետազոտված բույսերի տերևներում կարոտինոիդների կոնցենտրացիայի ամենաբարձր ցուցանիշ որոշվել է *Thymus serpyllum* L. բույսում՝ 1.3971 մգ/լ, իսկ ամենացածրը՝ *Teucrium polium* L. բույսի տերևներում՝ 0.346 մգ/լ, այսինքն՝ գրեթե 4. 037 անգամ ավելի:

Ըստ տերևներում կարոտինոիդների կոնցենտրացիայի տվյալների՝ կազմվել է հետազոտված բույսերի շարք.

Thymus serpyllum L.>*Asparagus officinalis* L.>*Mentha viridis* L.>*Urtica dioica* L.>*Heracleum sosnowskyi*>*Chelidonium majus* L.>*Polygonatum odoratum* (Mill) Druce>*Apium graveolens* L.>*Chaerophyllum bulbosum* L.>*Teucrium polium* L.:

Վանաձորի հարակից տարածքներում աճող հետազոտված բույսերի ցողունում և տերևներում կարոտինոիդների կոնցենտրացիայի համեմատությունը *Thymus serpyllum* L. Բույսում որոշված ցուցանիշի հետ բերված է թիվ 3 զծապատկերում:



Գծապատկեր 3. Վանաձորի հարակից տարածքներում աճող հետազոտված բույսերի փորձանմուշների ցողունում և տերևներում կարոտինոիդների կոնցենտրացիայի համեմատությունը

1. *Thymus serpyllum* L.,
2. *Teucrium polium* L.,
3. *Asparagus officinalis* L.,
4. *Mentha viridis* L.,
5. *Apium graveolens* L.,
6. *Chaerophyllum bulbosum* L.,
7. *Urtica dioica* L.,
8. *Chelidonium majus* L.,
9. *Heracleum sosnowskyi*,
10. *Polygonatum odoratum* (Mill.) Druce

Հետազոտված նույն բույսերի փորձանմուշների ցողունում և տերևներում կարոտինոիդների կոնցենտրացիայի ցուցանիշները համեմատվել են միմյանց հետ: Պատկերն այսպիսին է.

Thymus serpyllum L. բույսի փորձանմուշի տերևներում կարոտինոիդների կոնցենտրացիան գերազանցում է ցողունում կարոտինոիդների կոնցենտրացիային 62.09 անգամ, *Teucrium polium* L.)՝ ցողունում՝ 3.357, *Asparagus officinalis* L.՝ ցողունում 1.123, *Mentha viridis* L.՝ ցողունում 1.210, *Apium graveolens* L.՝ ցողունում՝ 1.745, *Chaerophyllum bulbosum* L.՝ տերևներում՝ 23.78, *Urtica dioica* L.՝ ցողունում՝ 1.716, *Chelidonium majus* L.՝ տերևներում 115.77, *Heracleum sosnowskyi*՝ ցողունում 1.03, *Polygonatum odoratum* (Mill.) Druce՝ տերևներում 1.533 անգամ:

Ներկայացություն

Կատարված հետազոտությունների արդյունքում հանգել ենք ներքոհիշյալին.

- Վանաձորում աճող բույսերում հետազոտված բույսերից 5-ում քլորոֆիլ a-ի կոնցենտրացիան բարձր է ցողունում՝ *Thymus serpyllum* L., *Chaerophyllum bulbosum* L., *Chelidonium majus* L., *Heracleum sosnowskyi*, *Polygonatum odoratum* (Mill.) Druce, իսկ հինգ բույսում՝ *Teucrium polium* L., *Asparagus officinalis* L., *Mentha viridis* L., *Apium graveolens* L., *Urtica dioica* L.՝ տերևներում:
- Վանաձորում աճող հետազոտված բույսերից 7-ում քլորոֆիլ b-ի կոնցենտրացիան բարձր է ցողունում՝ *Thymus serpyllum* L., *Asparagus officinalis* L., *Mentha viridis* L., *Chaerophyllum bulbosum* L., *Chelidonium majus* L.,

Heracleum sosnowskyi, *Polygonatum odoratum* (Mill) Druce, իսկ երեք բույսում՝ *Apium graveolens* L., *Urtica dioica* L., *Teucrium polium* L., տերևներում:

- Վանաձորում աճող հետազոտված բույսերից 6-ում կարոտինոիդների կոնցենտրացիան բարձր է ցողունում՝ *Teucrium polium* L., *Asparagus officinalis* L., *Mentha viridis* L., *Apium graveolens* L., *Urtica dioica* L., *Heracleum sosnowskyi*, իսկ չորսում *Thymus serpyllum* L., *Chaerophyllum bulbosum* L., *Chelidonium majus* L., *Polygonatum odoratum* (Mill) Druce՝ տերևներում:
- Ելնելով կարոտինոիդների կոնցենտրացիաների տվյալներից և հաշվի առնելով դրանց ազդեցությունը մարդու առողջության վրա՝ Վանաձոր քաղաքի ազգաբնակչությանն առաջարկում ենք սննդում և կենցաղում օգտագործել թվարկված բույսերի ցողունը՝ *Teucrium polium* L., *Asparagus officinalis* L., *Mentha viridis* L., *Apium graveolens* L., *Urtica dioica* L., *Heracleum sosnowskyi*, իսկ *Thymus serpyllum* L., *Chaerophyllum bulbosum* L., *Chelidonium majus* L., *Polygonatum odoratum* (Mill) Druce՝ բույսերի տերևները:

DOI: <https://doi.org/10.58726/27382923-2025.1-78>

Գրականության

1. Եդոյան Ռ. Հ., Վարդանյան Ջ. Ս. Բույսերի ֆիզիոլոգիայի լաբորատոր աշխատանքների ձեռնարկ, Երևան, 2006, 144 էջ:
2. Թանգամյան Տ. Վ., Աղաջանյան Մ. Ա., Բույսերի ֆիզիոլոգիա, Երևան, 2006, էջ 287, էջ 111-114:
3. Մանասյան Մ. Գ., Գրիգորյան Ա. Թ., Եդոյան Գ. Բ., Լոռու մարզ, Երևան, 2003, 203 էջ:
4. Հայկական ՍՄՀ ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, 1971, էջ 470:
5. Ռուբին Բ. Ա., Բույսերի ֆիզիոլոգիայի դասընթաց, Երևան 1985, 682 էջ:
6. Վարդանյան Ջ. Ս., Գևորգյան Ա. Ժ., Ղազարյան Ա. Հ., Ավետիսյան Գ. Ս., Կարոտինոիդների պարունակությունը որոշ մերձարևադարձային բույսերի պտուղներում, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Բնական և ճշգրիտ գիտություններ, 1 // ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վանաձորի պետական համալսարան, Վանաձոր, 2023, 31-39, DOI: <https://doi.org/10.58726/27382923-ne2023.1-48>, ISSN 2738-2923
7. Վարդանյան Ջ., Հովհաննիսյան Ա., Միրզոյան Յ., Քրոքֆիլի պարունակության որոշումը SAMBUCUS NIGRA L. և RUMEX ACETOSA L. տեսակների տերևներում, ՀՀ ԿԳ Նախարարություն, ՎՊՀ Գիտական տեղեկագիր, Պրակ Բ, Երևան, 2016, էջ 97-104
8. Վարդանյան Ջ., Սաֆարյան Ա., Աղաբեկյան Լ., Բույսերի տերևներում քլորոֆիլի պարունակության կախվածությունը աճելավայրի պայմաններից, ՎՊՀ-ի Գիտական տեղեկագիր, պրակ Բ, թիվ 2, 2021, էջ 20-30:

9. Бриттон Г. Биохимия природных пигментов, пер. с англ., Москва: Мир, 1986. - 422 с.
10. Варданыан З. С., Казарян А. Г., Симонян Л. Г. Содержание каротиноидов в тканях произрастающих в Лорийском и Тавушском марзах растения *Sambucus nigra* L./ Научный журнал «Sciences of Europe», № 134, 2024, Прага, с. 16-20., ISSN 3162-2364, DOI: 10.5281/zenodo.10641519
11. Варданыан З. С., Байрамян Л. Е., Саакян Г. Р. Количественные показатели хлорофилла в стеблях некоторых съедобных диких растений / Западно-Сибирский научный центр. Сборник Международной научно-практической конференции. Актуальные и перспективные направления развития научно—технологического прогресса. Кемерово, 2020, с. 18-21.
12. Воробев В. Н. и др. Практикум по физиологии растений. Казань, 2013, с. 23-30.
13. Доспехов В. А. Методика полевого опыта/ Москва: Колос, 1973, 336 с.
14. Лебедев С. И. Физиология растений. Издательство Колос, 1982, с. 134-139.
15. Малахова М. В. Влияние каротиноидов на обмен холестерина в клетках человека *in vitro*. Диссертация на соискание ученой степени кандидата биологических наук, Москва, 1999.
16. Сергеев А. В., Ананьев В. С., Капитанов А. Б., Коростылев С. А., Букреев Ю. М., Власенкова Н. К., Просалкова И. Р., Решетникова В. В., Шубина И. Ж. Фармакокинетика каротиноидов и каротин-содержащих препаратов. Российский биотерапевтический журнал. 2017; 16(3):92-106. <https://doi.org/10.17650/1726-9784-2017-16-3-92-101>
17. Тумова М. С. Содержание фотосинтетических пигментов в хвое, 2010, с. 9-12.
18. Bendich A. Carotenoids and the immune response. 1989, DOI: 10.1093/jn/119.1.112. PMID: 2643693
19. Khachik F. Distribution and metabolism of dietary carotenoids in humans as a criterion for development of nutritional supplements. Pure and Applied Chemistry, vol. 78, no. 8, 2006, pp. 1551-1557. <https://doi.org/10.1351/pac200678081551>
20. Kim S. H. Inhibitory effect of astaxanthin on oxidative stress-induced mitochondrial dysfunction-a mini-review. Nutrients, 2018, № 10(9), pp. 1137–1151. DOI: <https://doi.org/10.3390/nu10091137>.
21. Mullineaux, C. W. Electron transport and light-harvesting switches in cyanobacteria. Frontiers in Plant Science, 2014, № 5, p. 7. DOI: <https://doi.org/10.3389/fpls.2014.00007>.
22. Vardanyan Z., Gevorgyan A., Avetisyan G. Content of Carotinoids in the Leaves of Some Spices/ Endless light in science, Almaty, Kazakhstan, 2022, pp. 151-155, ISSN - 2709-1201, ISBN — 978-601-332-668-9
23. Prakash P. In vitro inhibition of proliferation of estrogen-dependent and estrogen-independent human breast cancer cells treated with carotenoids or retinoids. DOI: <https://doi.org/10.1093/jn/131.5.1574>. // Nutrition Journal, 2001, №131, pp. 1574–1580.

24. Tomita Y. Augmentation of tumor immunity against syngeneic tumors in mice by beta-carotene // Journal of the National Cancer Institute. 1987, № 78, pp. 679–681. DOI: <https://doi.org/10.1093/jnci/78.4.679>
25. Yao Y., You J., Ou Y., Ma J., Wu X., Xu G. Ultraviolet-B protection of ascorbate and tocopherol in plants related with their function on the stability on carotenoid and phenylpropanoid compounds, 2015, DOI: 10.1016/j.plaphy.2015.02.021. PMID: 25749732
26. <https://www.korolevpharm.ru/proizvodstvo/kachestvo/metodiki-i-testy/metod-opredeleniya-soderzhaniya-karotinoidov.html>
27. Wettstein, P. von. Chlorophyll, etc., und der submikroskopische Formwechsel der Plastiden //Exp. CellRes, 1957. V.12, No4, pp. 427–431.

**Определение концентраций хлорофиллов и каротиноидов
в некоторых дикорастущих съедобных растениях, произрастающих
в окрестностях города Ванадзор**

*Варданян Заруи,
Казарян Армине*

Резюме

Ключевые слова: растительные пигменты, оптическая плотность хлорофилла, концентрация пигментов, растительный экстракт, длина световой волны, квант света, спиртовой раствор хлорофилла, каротиноиды

Исследование концентрации хлорофиллов и каротиноидов в стеблях и листьях десяти видов растений, взятых из дикой природы в окрестностях города Ванадзор Лорийского марза, показало, что концентрации пигментов в вегетативных органах разных растений различны. У пяти исследованных видов растений, произрастающих в Ванадзоре, концентрация хлорофилла была выше в стеблях *Thymus serpyllum* L., *Chaerophyllum bulbosum* L., *Chelidonium majus* L., *Heracleum sosnowskyi*, *Polygonatum odoratum* (Mill) Druce. В то же время, у других пяти видов *Teucrium polium* L., *Asparagus officinalis* L., *Mentha viridis* L., *Apium graveolens* L., *Urtica dioica* L. концентрация хлорофилла, а была выше в листьях. Что касается хлорофилла b, у семи видов растений его концентрация была выше в стеблях *Thymus serpyllum* L., *Asparagus officinalis* L., *Mentha viridis* L., *Chaerophyllum bulbosum* L., *Chelidonium majus* L., *Heracleum sosnowskyi*, *Polygonatum odoratum* (Mill) Druce. В трех видах: *Apium graveolens* L., *Urtica dioica* L., *Teucrium polium* L. более высокая концентрация хлорофилла b наблюдалась в листьях. Основываясь на данных о концентрации каротиноидов, населению рекомендуется использовать в пищу и быту стебли следующих растений: *Teucrium polium* L., *Asparagus officinalis* L., *Mentha viridis* L., *Apium graveolens* L., *Urtica dioica* L., *Heracleum sosnowskyi*. В то же время, листья стоит употреблять у *Thymus serpyllum* L., *Chaerophyllum bulbosum* L., *Chelidonium majus* L., *Polygonatum odoratum* (Mill) Druce).

The Determination of Chlorophyll and Carotenoid Concentrations in Certain Wild Edible Plants Growing in the Vicinity of Vanadzor

**Vardanyan Zaruhi,
Ghazaryan Armine**

Summary

Key words: plant pigments, optical density of chlorophyll, concentration of pigment, plant extract, light wavelength, light quantum, alcoholic solution of chlorophyll

The study of chlorophyll and carotenoid concentrations in the stems and leaves of ten plant species collected from the wild flora of the Vanadzor region of Lori marz, revealed that the concentrations of chlorophyll *a* and chlorophyll *b* was different in the vegetative organs of these plants. In the five of the investigated plant species growing in Vanadzor *Thymus serpyllum* L., *Chaerophyllum bulbosum* L., *Chelidonium majus* L., *Heracleum sosnowskyi*, *Polygonatum odoratum* (Mill) Druce – chlorophyll *a* concentration was higher in the stem. Meanwhile, in the five other species – *Teucrium polium* L., *Asparagus officinalis* L., *Mentha viridis* L., *Apium graveolens* L., *Urtica dioica* L., chlorophyll *a* concentration was higher in the leaves. Regarding chlorophyll *b*, the concentration was higher in the stems of seven plant species *Thymus serpyllum* L., *Asparagus officinalis* L., *Mentha viridis* L., *Chaerophyllum bulbosum* L., *Chelidonium majus* L., *Heracleum sosnowskyi*, *Polygonatum odoratum* (Mill) Druce. While in the three species *Apium graveolens* L., *Urtica dioica* L., *Teucrium polium* L. it was higher in the leaves. Based on carotenoid concentration data, we recommend that the residents of Vanadzor incorporate the stems of *Teucrium polium* L., *Asparagus officinalis* L., *Mentha viridis* L., *Apium graveolens* L., *Urtica dioica* L., *Heracleum sosnowskyi*. into their diet and daily use.

Ներկայացվել է 29. 03. 2025 թ.
Գրախոսվել է 15. 04. 2025 թ.
Ընդունվել է տպագրության 05. 06. 2025թ.

**Կրտսեր դպրոցականների կենսաբանական և
քրոնոլոգիական տարիքի համապատասխանության որոշումը
Վանաձորի մի շարք դպրոցներում**

**Քառյան Շուշան,
Մանուկյան Տաթևիկ**

DOI: <https://doi.org/10.58726/27382923-2025.1-92>

Հանգուցային բառեր. *Ֆիլիպինյան թեստ, ռեգրեսիոն սանդղակ, աններդաշնակ և անհամաչափ զարգացում, սոմատոմետրիկ շեղումներ, տարիքային համապատասխանություն*

Նախաբան

Կենսաբանական տարիքը մարդու առողջության գնահատականն է և առավել կարևորվում է, երբ առնչվում է երեխաներին: Երեխաների մոտ առողջական խնդիրների առաջացման ռիսկը մեծանում է, եթե նրանց կենսաբանական տարիքը գերազանցում է կամ չի համապատասխանում քրոնոլոգիական տարիքին [2]:

Կենսաբանական և քրոնոլոգիական տարիքների միջև անհամապատասխանությունը կրտսեր դպրոցականների մոտ կարող է առողջական խնդիրների պատճառ դառնալ և իջեցնել ուսուցման արդյունավետությունը: Քանի որ հետևյալ խնդիրները բավարար չափով լուսաբանված չեն, դրանց ուսումնասիրությունն ու վերլուծությունը կարևորվում և մնում են արդիական [5; 6]:

Մեծահասակների կենսաբանական տարիքը, եթե հաճախ ընկալվում է որպես ընդհանուր առողջության և կայունության ցուցանիշ, երեխաների մոտ արագացված կենսաբանական տարիքի հայեցակարգային մեկնաբանությունը և զարգացման հետ դրա կապը մնում է ոչ լիարժեք մեկնաբանված [5]:

Ներկայումս հետազոտությունները այս թեմայի շրջանակներում շարունակվում են:

Աշխատանքի նպատակը և խնդիրները

Վանաձորի թիվ 1 և թիվ 3 հիմնական դպրոցներում փորձ է արվել բացահայտել կրտսեր դպրոցականների (I դասարան, 5,9 տ. - 6,5 տ.) քրոնոլոգիական և կենսաբանական տարիքների համապատասխանությունը: Այդ նպատակով

- կատարվել են անթրոպոմետրիկ և ֆիզիոմետրիկ չափումներ,
- ըստ ցուցանիշների պարզվել է քրոնոլոգիական և կենսաբանական տարիքի համապատասխանությունը,
- պարզել է կենսաբանական տարիքի համապատասխանությունը որոշ հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների համատեքստում:

Նյութը և մեթոդները

Հետազոտությանը մասնակցել է 92 աշակերտ՝ 45 աղջիկ և 47 տղա, որոնք ներառված չեն եղել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող (ԿԱՊԿ) երեխաների խմբում: Վերջինս անց է կացվել դպրոցների տնօրենների, աշակերտների և ծնողների համաձայնությամբ, պահպանվել է նաև անձնական տվյալների գաղտնիությունը:

Երեխաների կենսաբանական զարգացումը գնահատելու համար կիրառվել են կոմպլեքս (համալիր) մեթոդներ, որոնք հաշվի են առնում ինչպես մարմնի մորֆոֆունկցիոնալ և ֆիզիկական զարգացման վիճակը, այնպես էլ երեխայի անձնագրային տարիքի համապատասխանությունը կենսաբանական զարգացման մակարդակին: Մեթոդները թույլ են տալիս առանձնացնել տարիքին համապատասխան և ներդաշնակ ֆիզիկական զարգացում ունեցող երեխաներին, ինչպես նաև ֆիզիկական զարգացման տարիքային անհամապատասխան ցուցանիշներ ունեցող երեխաներին [3]: Ֆիզիկական զարգացման ստանդարտների մշակման և զարգացման գնահատման համար նախ պետք է որոշել հետազոտությանը մասնակցող երեխայի քրոնոլոգիական տարիքը:

Ֆիզիկական զարգացման գնահատումը կատարվում է 2 փուլով. առաջին փուլում գնահատվում է կենսաբանական զարգացման մակարդակն ըստ ֆիլիպինյան թեստի [3]: Ֆիլիպինյան թեստի արդյունքները բավականին հստակ նկարագրում են երեխայի կենսաբանական տարիքը, քանի որ արտահայտում են ոչ միայն կմախքի զարգացման, այլև առավել կարևոր՝ օրգանիզմի մորֆոֆունկցիոնալ հասունության նկարագիրը:

Երկրորդ փուլում գնահատվում է օրգանիզմի մորֆոֆունկցիոնալ վիճակն ըստ հասակի, մարմնի զանգվածի, կրծքավանդակի շրջագծի և ձեռքերի մկանային ուժի՝ օգտվելով այդ ցուցանիշների համապատասխան ստանդարտի աղյուսակից, որտեղ՝ σ -ն հատկանիշի միջին շեղման մեծությունն է, σR -ը սիգմայի ռեգրեսիան է, որը հատկանիշի անհատական շեղման մեծությունն է, M -ը՝ անթրոպոմետրիկ և ֆիզիոմետրիկ տվյալների միջին վիճակագրական ցուցանիշն է:

Մորֆոֆունկցիոնալ վիճակը գնահատվում է՝

- ա. ներդաշնակ, եթե զանգվածը և կրծքավանդակի շրջագիծը գտնվում են $M \pm 1\sigma R$ ընդգրկույթում, ֆունկցիոնալ ցուցանիշները համապատասխանում են տարիքային նորմերին ($M \pm \sigma$ կամ $M \pm 2\sigma$),
- բ. աններդաշնակ, երբ մարմնի զանգվածը և կրծքի շրջագիծը փոքր են $1,1-2 \sigma R$ -ից կամ մեծ են $1,1+2 \sigma R$ -ով, իսկ ֆունկցիոնալ ցուցանիշները ցածր են նորմայից,
- գ. խիստ աններդաշնակ, երբ մարմնի զանգվածը և կրծքի շրջագիծը նորմայից ցածր են $2,1 \sigma R$ -ով կամ մեծ են $2,1 \sigma R$ -ով [1, 3]:

Առանձնացվել է հետազոտությանը մասնակից սովորողների հետևյալ տարիքային խումբը՝ ըստ քրոնոլոգիական տարիքի.

- 6տ. (5,9 տ.-6,5տ.) - 92 աշակերտ

Ռեգրեսիոն սանդղակների մեթոդի հետ համատեղ կիրառվել է նաև Կետլեի ինդեքսի մեթոդը, ինչը հնարավորություն է տվել հաշվարկել երեխայի հասակի և քաշի հարաբերակցությունը, այնուհետև համեմատել նորմաների աղյուսակի տվյալների հետ, գնահատել զարգացման խախտումները և դրանց պատճառները [4; 3]:

Հոգեֆիզիոլոգիական և մորֆոֆունկցիոնալ ցուցանիշների միջև փոխհարաբերությունները բացահայտելու համար օգտագործվում է Ա. Կերնի (1955 թ.) և Յ.

Իրասելի (1966 թ.) թեստը [7]: Այս թեստի առաջադրանքների հաջողությամբ կատարումը ցույց է տալիս դիտարկման, ուշադրության, հիշողության մակարդակը, բնութագրում է դաստակի մանր մկանների զարգացման աստիճանը, ինչպես նաև պատկերացում է տալիս երեխայի սոցիալական զարգացման մակարդակի մասին:

Աշխատանքի արդյունքները և վերլուծությունը

Ֆիլիպինյան թեստի արդյունքներն արձանագրում են, որ աշակերտների 47 %-ի մոտ նկատվում է անհամապատասխանություն, մասնավորապես ֆիլիպինյան թեստի բացասական արդյունք:

Աշակերտների կենսաբանական զարգացման մակարդակի գնահատմանն ուղղված հաջորդ կարևորագույն քայլը նրանց ֆիզիկական զարգացման 3 ցուցանիշների՝ հասակի, քաշի, կրծքավանդակի շրջագծի միջև առկա կապի վերլուծությունն է:

Վերջինիս որոշման համար կիրառվել է ռեգրեսիոն սանդղակների մեթոդը, որը թույլ է տալիս գնահատել զարգացումը ֆիզիկական 3 ցուցանիշների միջև առկա կապի համատեքստում:


Յուրաքանչյուր երեխայի համար անհատապես հաշվարկվել է քաշի և կրծքավանդակի ռեգրեսիոն շեղումը / σR /, ենթարկվել է վերլուծության, որի արդյունքում ստացվել է կրտսեր դպրոցականների զարգացման հետևյալ խմբերը՝

- Ցածր, աններդաշնակ, անհամաչափ,
- Միջին, ներդաշնակ, համաչափ,
- Միջին, աններդաշնակ, համաչափ,
- Միջին, աններդաշնակ, անհամաչափ,
- Միջին, խիստ աններդաշնակ, անհամաչափ,
- Միջինից ցածր, խիստ աններդաշնակ, անհամաչափ,
- Միջինից ցածր, աններդաշնակ, անհամաչափ,
- Միջինից ցածր, ներդաշնակ, անհամաչափ,
- Միջինից բարձր, աններդաշնակ, անհամաչափ,
- Միջինից բարձր, ներդաշնակ, անհամաչափ,
- Միջինից բարձր, խիստ աններդաշնակ, անհամաչափ,
- Բարձր, ներդաշնակ, անհամաչափ:

Միջին, ներդաշնակ և համաչափ զարգացում, ինչը ենթադրում է ինչպես մարմնի հասակի, քաշի և կրծքավանդակի շրջագծի տվյալների միջև լիարժեք համապատասխանություն, այնպես էլ վերոնշյալ 3 պարամետրերի համապատասխանություն՝ երեխայի օրացուցային տարիքին համապատասխան: Համապատասխանություն դիտվել է հետազոտությանը մասնակցած միայն՝ 34,76 % աշակերտների մոտ: Կենսաբանական զարգացման մակարդակը խիստ կորելյացիայի մեջ է գտնվում ֆիզիկական զարգացման մակարդակից:


Աններդաշնակ և անհամաչափ զարգացում ունեցող երեխաները կազմում են աշակերտների ընդհանուր թվի 65 %-ը (գծապատկեր 1): Բացառապես բոլոր տարիքային խմբերում նկատվում են զարգացման սոմատոմետրիկ շեղումներով

աշակերտներ, ինչը խոսում է վաղ տարիքից սկսած կենսաբանաֆիզիկական զարգացման խաթարված ընթացքի մասին:



Գծապատկեր 1. Կրտսեր դպրոցականների ֆիզիկական զարգացման գնահատման խմբերը

Ներդաշնակ զարգացման պարագայում թերևս ամեն ինչ պարզ է. մարմնի քաշը համապատասխանում է հասակին, ոչ ներդաշնակ զարգացման պարագայում գործ ունենք կա՛մ քաշի պակասի, կա՛մ քաշի ավելցուկի հետ (գծապատկեր 2.):



Գծապատկեր 2. Զարգացման ցուցանիշները ըստ Կեղևի ինդեքսի՝ արտահայտված տոկոսներով


Վերոնշյալից հետևում է, որ համալիր մեթոդի մեջ, ներառվել է նաև դաստակի ուժի չափումը: Այս տվյալը հնարավորություն է տալիս հետազոտվողների կենսաբանական զարգացման մակարդակը դիտարկել մի քանի ցուցանիշների վերլուծության տեսանկյունից: Աշակերտների դաստակի ուժը չափվել է տվյալ տարիքային խմբի համար նախատեսված ձեռքի ուժաչափով: Արդյունքների վերլուծությունը կատարվել է նորմաների համապատասխան աղյուսակի տվյալների հիման վրա՝ հաշվի առնելով տարիքային և սեռային առանձնահատկությունները:

Հետազոտությանը մասնակցած երեխաների ընդամենը 4,34 %-ի մոտ է դիտվում ձեռքի ուժի համապատասխանություն՝ ըստ երկու ձեռքի, մասամբ համապատասխանություն ըստ մեկ ձեռքի դիտվում է 9,78 %-ի մոտ: Սովորողների 85,69 %-ի պարագայում ո՛չ աջ և ո՛չ ձախ դաստակի ուժերը չեն համապատասխանում նորմային: Նման անհամապատասխանությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վեց տարեկանում, ըստ հայտնի տվյալների, դեռևս ավարտված չէ դաստակի մատերի ֆալանգների ոսկրացումը, մատերի մանր մկանները թույլ են զարգացած: Դրանից ելնելով, ինչպես նշում է Ն. Ն. Կուինջին, ձեռքը՝ այդ տարիքում, մորֆոլոգիապես դեռևս պատրաստ չէ յուրացնելու գրելու արվեստը [2]: Այստեղից էլ գալիս են բոլոր դժվարությունները: Վեց տարեկան աշակերտներից միայն 12,5 %-ի մոտ է դիտվում ձեռքի ուժի մասամբ համապատասխանություն: Այս թվերը փաստում են երեխաների՝ գրել սովորելու ֆիզիոլոգիական անպատրաստվածության մասին:

Կենսաբանական զարգացման մակարդակի որոշման համար անհրաժեշտ է նաև քննարկել երեխայի հոգեբանաֆիզիոլոգիական և մորֆոֆունկցիոնալ ցուցանիշների միջև կապը: Վերջինիս բացահայտման համար կիրառվել է *Կերն-Իրասեկի* թեստը, որը, ըստ շատ հեղինակների, հանդիսանում է բավականին տեղեկատվական, նաև՝ օրգանիզմի հիմնական ֆունկցիոնալ համակարգերի վիճակը բնութագրող թեստ: Այն իր մեջ ներառում է 3 առաջադրանք, և վերջիններիս անհատական գնահատումից հետո երեխաները դասակարգվում են ստորև բերված խմբերում:

- Հասուն խումբ,

- Միջին հասուն խումբ, որը իր մեջ ներառում է երկու ենթախումբ՝ միջին հասուն (+) և միջին հասուն (-),
- Ոչ հասուն խումբ [7]:



**Գծապատկեր 3. Տարիքային խումբ՝ 5,9-6,5 տ.
Կերն-Իրասեկի թեստի արդյունքները**

Կերն-Իրասեկի թեստի ստացված արդյունքները 5,9-6,5 տարեկանների մոտ կազմում են՝ հասուն 6 %, միջին հասուն՝ +37 %, միջին հասուն՝ -44 %, ոչ հասուն՝ 13 % (գծապատկեր 3):

Նկատվում է միջին հասունություն ունեցող աշակերտների քանակի գերակշռում: Ոչ հասուն խմբի մեջ 13 %-ն են ներառված, իսկ 6 %-ը՝ հասուն:

Թեստի առաջադրանքների հաջող կատարումը կարող է խոսել աշակերտների ուշադրության, հիշողության բարվոք մակարդակի, դաստակի մանր մկանների զարգացման բավարար աստիճանի և սոցիալական, ադապտացիոն ունակությունների պատշաճ դրսևորման մասին: Ինչպես հայտնի է, երեխաները ընդունվում են դպրոց 6 տարեկանում, այս տարիքային խմբի պարագայում աշակերտների 6 %-ի մոտ է նկատվել նորմալ զարգացում (հասուն խմբի մեջ մտնող երեխաներ):

Արդյունքները փաստում են, որ երեխաները, պատրաստ չլինելով դպրոց հաճախելուն, ընդունվում են դպրոց, և ընդունելության համար հաշվի է առնվում երեխայի տարիքի որոշակի շեմը: Երեխան ընդունվում է դպրոց՝ առանց հաշվի առնելու նրա կենսաբանական զարգացման մակարդակը, մորֆոֆունկցիոնալ և հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների միջև կապը, ինչպես նաև վերոնշյալ ցուցանիշների, կենսաբանական և քրոնոլոգիական տարիքների համապատասխանության կորելյացիան:

Հետազոտության այսօրինակ արդյունքները ևս մեկ անգամ փաստում են նախադպրոցական տարիքի երեխայի կենսաբանական զարգացման մակարդակի որոշման անհրաժեշտությունը՝ մինչև դպրոց ընդունվելը: Միևնույն տարիքի, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաները, ինչպես հայտնի է, կարող են տարբերվել հոգեբանական, սոցիալական, ադապտացիոն, ֆիզիկական և կենսաբանական ցուցանիշներով: Զարգացման այս ցուցանիշները

կարող են համապատասխանել օրացուցային տարիքին կամ՝ ոչ: Հակառակ դեպքում անհրաժեշտ է, հաշվի առնելով երեխաների հնարավոր անպատրաստվածության մակարդակը, ուսումնական գործընթացում և ուսումնական պլանները համապատասխանեցնել վերջիններիս:

Եզրակացություն

- Կենսաբանական տարիքի անհամապատասխանությունը քրոնոլոգիական տարիքի նկատմամբ կրտսեր դպրոցական տարիքի երեխաների մոտ բավականին բարձր տոկոս է կազմում: Ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական զարգացման աստիճանը զգալի հետ է մնում, որը իջեցնում է երեխայի՝ սովորելու նկատմամբ մոտիվացիան և հետևաբար նաև ուսուցման արդյունավետությունը:
- Երեխաների մեծ մասը օժտված է ուսուցման նյութը յուրացնելու բարձր ունակությամբ և եթե այն տրվի ճիշտ և տարիքային առանձնահատկություններին համապատասխան, ուսուցման նկատմամբ հետաքրքրությունը կլինի մեծ, իսկ արդյունավետությունը՝ բավականին բարձր:
- Երեխան ընդունվում է դպրոց, սակայն հաշվի չի առնվում նրա կենսաբանական զարգացման մակարդակը, մորֆոֆունկցիոնալ և հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների միջև կապը, ինչպես նաև վերոնշյալ ցուցանիշների, կենսաբանական և քրոնոլոգիական տարիքների միջև համապատասխանության կորելյացիան:

DOI: <https://doi.org/10.58726/27382923-2025.1-92>

Գրականություն

1. Борисова Т. С., Лабодаева Ж. П. Гигиеническая оценка состояния здоровья детей и подростков: метод. рекомендации/ 3-е изд., доп. и испр., Минск: БГМУ, 2017, с. 25-28.
2. Мануева Р. С., Физическое развитие детей и подростков. Показатели. Методы оценки: учебное пособие/ ФГБОУ ВО ИГМУ Минздрава России, Кафедра общей гигиены. Иркутск: ИГМУ, 2018, с. 10-19.
3. Осолодкова Е. В., диагностика готовности и адаптация детей к обучению в школе: учебное пособие/ Челябинск: Изд-во Челяб. гос. пед. ун-та, 2016, с. 56-63.
4. Показатели массы тела <https://gnicpm.ru/articles/zdorovyy-obraz-zhizni/pokazateli-massy-tela.html>, 2021.
5. By Dr. Liji Thomas, MD Study reveals surprising link between biological age and child development <https://www.news-medical.net/news/20230607/Study-reveals-surprising-link-between-biological-age-and-child-development.aspx>, 2023.
6. <https://elifesciences.org/articles/85104> Jun 6, 2023.
7. https://nsportal.ru/sites/default/files/2021/07/05/test_kerna_yerasika.pdf.

Определение соответствия биологического и хронологического возраста младших школьников в ряде школ Ванадзора

*Карян Шушан,
Манукян Татевик*

Резюме

Ключевые слова: *Филиппинский тест, шкала регрессии, дисгармоничное и непропорциональное развитие, соматометрические отклонения, соответствие возрасту*

В статье предпринята попытка выявить соответствие между хронологическим и биологическим возрастом младших школьников 1 класса (5,9 - 6,5 лет) начальных школ № 1 и 3 города Ванадзор. В исследовании приняли участие 92 учащихся: 45 девочек и 47 мальчиков, которые не входили в группу детей, нуждающихся в специальных условиях обучения. Для оценки биологического развития детей использовались комплексные методики, учитывающие как состояние морфофункционального и физического развития организма, так и соответствие паспортного возраста ребенка уровню биологического развития. Результаты показали, что дети поступают в школу, будучи не готовыми к обучению (при приеме учитывается определенный порог возраста ребенка). Прием ребенка в школу осуществляется без учета уровня его биологического развития, взаимосвязи морфофункциональных и психофизиологических показателей, а также соотношения указанных показателей, биологического и хронологического возраста. Результаты исследования свидетельствуют о необходимости определения уровня биологического развития ребенка дошкольного возраста перед поступлением в школу. Дети одного и того же возраста, не нуждающиеся в специальных условиях обучения, могут различаться по различным психосоциальным, адаптационно-физическим и биологическим показателям. Эти показатели развития могут соответствовать или не соответствовать календарному возрасту.

Determining the Correspondence Between the Biological and Chronological Age of Primary School Children in Several Schools in Vanadzor

*Karyan Shushan,
Manukyan Tatevik*

Summary

Key words. *Philippine test, regression scale, disharmonious and disproportionate development, somatometric deviations, age correspondence*

This article examines an attempt was made to assess the correspondence between the chronological and biological age of first-grade students (aged 5.9 to 6.5) in primary schools No. 1 and 3 in the city of Vanadzor. The study involved 92 students – 45 girls and 47 boys – who did not belong to the group of children requiring special education conditions. To assess children's biological development, a comprehensive set of methods was used. These methods considered both the state of the body's morphofunctional and physical development, as well as the alignment between the child's chronological (passport) age and their level of biological development. The results revealed that children often begin school without being biologically ready for learning. Admission does not take into account the child's level of biological development, the interrelation of morphofunctional and psychophysiological indicators, or the correlation between these indicators, their biological and chronological age. The findings indicate the importance of assessing the biological development level of preschool-aged children before they start school. Children of the same chronological age, who do not require special education conditions, may differ significantly in terms of psychosocial, adaptive-physical, and biological indicators. These developmental indicators may or may not align with their calendar age.

Ներկայացվել է 15. 04. 2025 թ.

Գրախոսվել է 05. 05. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 05. 06. 2025թ.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՄԵԹՈԴԻԿԱ

ПЕДАГОГИКА И
МЕТОДИКА

PEDAGOGY AND
METHODOLOGY

**Ավագ դպրոցում քիմիայից լրացուցիչ նյութերի տրամադրումը որպես
ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց**

*Ավանեստվա Նելլի,
Հովսեփյան Անժելա,
Կոծինյան Տաթևիկ*

DOI: <https://doi.org/10.58726/27382923-2025.1-102>

***Հանգուցային բառեր.** ֆենոլներ, գունավոր ռեակցիաներ, լույսի քվանտ, արոմատիկ միացություններ, կոմպլեքսագոյացում, երկայթի (III) քլորիդ, քրոմոֆոր, գուգորդած կապեր*

Նախաբան

Քիմիայի ուսուցման գործընթացում լաբորատոր փորձերը կարևոր տեղ են զբաղեցնում: Դրանք հնարավորություն են տալիս աշակերտին դիտել, ուսումնասիրել, ճանաչել, հիշել, կիրառել, բացահայտել և, վերջապես, ստանալ արդյունք: Երբեմն լաբորատոր փորձերն այնքան են հետաքրքրում աշակերտին, որ նա սկսում է ինքնուրույն պրպտել և գտնել նոր տեղեկություններ նյութի կամ երևույթի մասին: Այս տեսակետից հետաքրքիր է իրականացնել և ուսումնասիրել մի շարք գունային փոփոխությամբ ընթացող որակական ռեակցիաները:

Որակական ռեակցիաները հնարավորություն են տալիս որոշակի մոլեկուլների, իոնների, ֆունկցիոնալ խմբերի հայտնաբերումը հետազոտվող նմուշում: Այս ռեակցիաներն ուղեկցվում են արտաքին ազդակներով: Դրանք են՝ գույնի փոփոխությունը, բոցի գունավորումը, նստվածքի առաջացումը, ջերմության անջատումը կամ կլանումը: Գույնի փոփոխությամբ ընթացող ռեակցիաներն այլ կերպ անվանում են գունավոր ռեակցիաներ: Կիրառելով գունավոր ռեակցիաներ՝ կարելի է հայտնաբերել և ուսումնասիրել մի շարք անօրգանական և օրգանական նյութերի հատկությունները [11]:

Բսկ ինչո՞վ է պայմանավորված նյութի գույնը: Ուսումնասիրելով գույնի տեսության սկզբունքները՝ հնարավոր է հասկանալ, թե ինչո՞ւ անգույն աղը կարող է փոխել իր գույնը՝ լուծելով ջրում կամ այլ լուծիչում, ինչո՞ւ է գործվածքը գունաթափվում արևի լույսի տակ, ինչո՞ւ է հայտնաբերվում փոխում իր գույնը՝ կախված միջավայրից և այլ երևույթներ: Գույնի տեսության գլխավոր սկզբունքը հետևյալն է. գույնը առաջանում է լույսի քվանտի և էլեկտրոնների փոխազդեցության հետևանքով: Նյութի գույնը որոշվում է մոլեկուլում էլեկտրոնների դասավորվածությամբ: Ցանկացած նյութ ունի գույն, քանի որ կլանում է որոշակի երկարության ալիքներ: Սակայն մարդու համար տեսանելի են բավականին նեղ տիրույթում ընկած ալիքները՝ 400-750 նմ երկարության ալիքները [9, 65]:

Ավագ դպրոցում քիմիայից խորացված ուսուցմամբ դասարաններում ֆենոլների և նրանց ածանցյալների գունավոր ռեակցիաներին վերաբերվող հարցեր քննարկելիս կարելի է չբավարարվել այն սուղ տեղեկություններով, որոնք առկա են քիմիայի 11-րդ դասարանի դասագրքում, այլ կարելի է այդ թեմային առնչվող

լրացուցիչ տեղեկություններ տալ ինչպես քիմիայից, այնպես էլ ֆիզիկայից: Այդ դեպքում հնարավորություն է առաջանում ոչ միայն համապատասխան դասաթեման դարձնել առավել ամբողջական, այլ նաև իրականացնել միջառարկայական կապեր ֆիզիկայի և քիմիայի միջև:

Աշխատանքի նպատակն է ցույց տալ, թե ինչպես կարելի է բարձրացնել ավագ դպրոցում քիմիայի որոշ դասաթեմաների ուսուցման արդյունավետությունը՝ այդ թեմայից լրացուցիչ նյութերի տրամադրման միջոցով: Որպես օրինակ հոդվածում քննարկված են ֆենոլների և նրանց ածանցյալների գունավոր ռեակցիաներին վերաբերվող հարցերը:

Դասավանդման փորձը ցույց է տալիս, որ ավագ դպրոցում որևէ առարկայից խորացված ուսուցման ժամանակ անհրաժեշտ է լինում սովորողներին ներկայացնել լրացուցիչ նյութեր՝ անհրաժեշտության դեպքում այն գուգակցելով միջառարկայական կապերով: Վերջինս թույլ է տալիս էապես բարձրացնել ուսուցման արդյունավետությունը և այն դարձնել առավել հետաքրքիր:

Տարբեր գույների զգացողությունն առաջանում է առանձին ալիքների ներգործությունից: Արևի լույսն իր մեջ պարունակում է ծիածանի բոլոր գույները, որոնց համապատասխանում են տարբեր երկարության լուսային ալիքներ: Սովորաբար նյութի գույնը որոշվում է այն ալիքի երկարությամբ, որը գերակշռում է անդրադարձման ժամանակ: Եթե լուսային ալիքների էներգիան նույն չափով է կլանվում կամ անդրադարձվում, ապա մեզ թվում է, որ նյութը սպիտակ է կամ անգույն: Եթե նյութը ամբողջությամբ կլանում է ալիքները, ապա այն թվում է սև: Երբ տեսանելի սպեկտրից պակասում են որոշ ալիքներ, առաջանում է լրացուցիչ գույնի զգացողություն: Նյութը գունավորված է, եթե ընտրողաբար կլանում է սպիտակ լույսի բաղադրիչները: Այդ դեպքում անցնում կամ անդրադարձվում են չկլանված ճառագայթները և առաջացնում լրացուցիչ գույնի զգացողություն (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Նյութի գույնի կախվածությունը ալիքի երկարությունից

Ալիքի երկարությունը, նմ	Կլանված լույսի գույնը	Նյութի գույնը
400-435	Մանուշակագույն	Դեղնականաչ
435-480	Կապույտ	Դեղին
480-500	Երկնագույն	Նարնջագույն
500-580	Կանաչ	Կարմիր
580-595	Դեղին	Մանուշակագույն
595-605	Նարնջագույն	Կապույտ
605-750	Կարմիր	Երկնագույն

Էլեկտրոնների շարժունակությունը, ընդունակությունը տեղափոխվել մեկ օբյեկտից այլ օբյեկտ, մեկ ատոմից այլ ատոմ, պայմանավորում են գույնի առաջացումը [4, 12]:

Այսպիսով, այն, ինչ մենք անվանում ենք գույն, արդյունք է ֆիզիկական և քի-

միական երևույթների՝ լույսի փոխազդեցությանը նյութի մոլեկուլների կամ ատոմների հետ և նյութից անդրադարձվող ալիքների ազդեցությունը մեր աչքերի ցանցաթաղանթի վրա: Մակայն էլեկտրոնների վիճակը մետաղներում և ոչ մետաղներում, անօրգանական և օրգանական նյութերում տարբեր են, հետևապես այդ նյութերում գույնի առաջացման մեխանիզմը նույնպես տարբերվում է: Լույսի ընտրողական կլանումը կախված է նյութի կառուցվածքից [10, 52]:

Մետաղների համար կարևոր է բյուրեղացանցի կանոնավոր դասավորվածությունը և էլեկտրոնների ազատ տեղաշարժվելու հնարավորությունը: Երբ մետաղի վրա ընկնում են լույսի ճառագայթներ, տեղի է ունենում արտացոլում և մետաղի գույնը պայմանավորվում է անդրադարձած ալիքի երկարությամբ: Օրինակ, սպիտակ փայլը, որը բնորոշ է ալյումինին և ցինկին, պայմանավորված է տեսանելի ճառագայթների գրեթե ամբողջ սպեկտրի արտացոլմամբ: Ոսկին ունի դեղնակարմրավուն գույն, քանի որ կլանում է կապույտ և մանուշակագույն ճառագայթները, իսկ մագնեզիումը սև է, ինչը նշանակում է, որ այն կլանում է ճառագայթների ամբողջ սպեկտրը [9, 78]:

Ոչ մետաղներում գույնի փոփոխությունը նույնպես կախված է կառուցվածքից, ինչով և պայմանավորված է ածխածնի, ֆոսֆորի, ծծմբի ալոտրոպ ձևափոխությունների տարբեր գունավորումը:


Անօրգանական նյութերի մոլեկուլների և իոնների կլանումը հետևանք է էլեկտրոնների էներգիայի մեծացման, սովատացման և բևեռացման աստիճանների փոփոխման: Այս դեպքում գույնը պայմանավորված է էլեկտրոնների տեղափոխվելու հնարավորությամբ մեկ օրբիտալից մեկ այլ ազատ օրբիտալ: Այստեղ կարևոր է արտաքին էլեկտրոնային մակարդակի կառուցվածքը: Դրանով է պայմանավորված, որ երկրորդային ենթախմբի մետաղների կատիոնները, որոնք ունեն թափուր d-օրբիտալ, գունավոր են [2, 93]:

Օրգանական նյութերում գույնի առաջացումը տեղի է ունենում այլ մեխանիզմով, որին ավելի մանրամասն կանդրադառնանք հոդվածում:


Հոդվածի բովանդակությունը

Ուսումնասիրելով մի շարք օրգանական նյութերի գույնը՝ 1869 թ. Օ. Վիտն առաջարկել է քրոմոֆորային տեսությունը, համաձայն որի՝ գույնը պայմանավորված է գույնի առաջացման համար պատասխանատու քրոմոֆոր խմբերի առկայությամբ: Դրանք են $-C=O$, $-C=N$, $-N=N$, $-C=C$ և այլն: Բսկ ատոքստքրոմոներ՝ $-OH$, $-SH$, $-NH_2$, $-OC_6H_5$ խմբերը ուժեղացնում են նյութի գունավորման աստիճանը [4, 15]:

Երկրորդ կարևորագույն գործոնը, որն ազդում է նյութի գունավորման վրա, զուգորդված կրկնակի կապերի առկայությունն է մոլեկուլում: Ընդ որում, որքան երկար է զուգորդված շղթան, այնքան, որպես կանոն, ավելի գունավորված է նյութը: Եթե $C_6H_5-CH=CH-C_6H_5$ ստիլբենը անգույն է, ապա $C_6H_5-(CH=CH)_2-C_6H_5$ դիֆենիլհեքսատրիենը դեղին է, իսկ $C_6H_5-(CH=CH)_6-C_6H_5$ դիֆենիլդեկադեկահեքսաեն նարնջագույն է [7]:



ա




բ

Նկար 1. ա) β -կարոտինի, բ) ռետինոլ (վիտամին A)

Դա իր արտահայտությունն է գտել նաև բնական նյութերի, ինչպես նաև մրգերի և բանջարեղենի գունավորման մեջ: Այսպես, մրգերի և բանջարեղենի վառ կարմիր կամ նարնջագույն գույնը պայմանավորված է π -կապերի երկար զուգորդված շղթաների առկայությամբ: Օրինակ՝ գազարի նարնջագույն լինելը բացատրվում է նրա մեջ β -կարոտինի՝ վիտամին A-ի նախավիտամինի առկայությամբ:

Նույնը կարելի է ասել ձմերուկի, լոլիկի կարմիր գույնի մասին, որը պայմանավորված է ψ -կարոտինի գույնով [1, 12]:



Նկար 2. ψ -կարոտինի

Ի տարբերություն ոչ հագեցած օրգանական նյութերի, հագեցած օրգանական նյութերի մեծ մասը անգույն է: Այստեղ ատոմները միմյանց միանում են շնորհիվ σ -կապերի: Էլեկտրոնները մնում են նույն էներգետիկ մակարդկում, քանի որ զրգրված վիճակի անցնելու համար անհրաժեշտ է մեծ քանակությամբ էներգիա: Դա է պատճառը, որ հագեցած ածխաջրածինները կլանում են մանուշակագույն ճառագայթները և գունավորված չեն:

Գունավորման համար ոչ պակաս կարևոր է նաև ածխածնային շղթայի բևեռացում, այսինքն՝ մոլեկուլի տարբեր հատվածներում դրական և բացասական լիցքերի առաջացումը:

Ի տարբերություն ալիֆատիկ ածխաջրածինների՝ արոմատիկ և հետերոցիկլիկ միացությունները պարունակում են փակ զուգորդված օղակներ: Այս միացություններում π -էլեկտրոններն առաջացնում են ընդհանուր էլեկտրոնային ամպ:

Արոմատիկ միացություններում π -էլեկտրոնների թվի մեծացումը բերում է գույնի առաջացմանը, քանի որ տեղի է ունենում գրգռման էներգիայի փոքրացում, և կլանումը տեղաշարժվում է երկարալիքային տիրույթ [8, 35]: Դրա օրինակներից է պոլիֆենոլի գունավորումը, որը կախված է նաև միջավայրից: Պոլիօքսիարիլենների լուծույթները, որոնք ունեն մուգ շագանակագույն կամ սև գույն, իներտ միջավայրում աղաթթվի ներկայությամբ նստեցնելիս առաջացնում են նրբադիսպերս սպիտակ կախույթ: Ժամանակի ընթացքում պոլիմերը անջատվում է նստվածքի ձևով և ձեռք է բերում իր նախկին գույնը: Այդ երևույթը բացատրվում է այն հանգամանքով, որ կախույթի առաջացման ժամանակ խախտվում է π - և p -էլեկտրոնների ապատեղայնացումը, որով պայմանավորվում է պոլիմերի գունավորումը: Հետագայում էլեկտրոնային ամպը նորից ապատեղայնացվում է, և նյութը ձեռք է բերում իր նախնական գույնը [5, 137]:

Գույնի փոփոխություն նաև նկատվում է, երբ տեղի է ունենում օրգանական նյութի փոխազդեցությունը երկրորդական ենթախմբի մետաղի իոնի հետ: Այս դեպքում առաջանում են կայուն կոմպլեքս միացություններ, որոնց գույնը կախված է լիգանդի և կոմպլեքսագոյացնողի տեսակից: Մետաղը տրամադրում է դատարկ d -օրբիտալ, իսկ օրգանական նյութի ատոմը, սովորաբար ազոտը կամ թթվածինը իր գույգ էլեկտրոնները, որի հետևանքով տեղի է ունենում գունային փոփոխություն: Օրինակ դեղին ալիգարինը տարբեր մետաղների հետ առաջացնում է տարբեր գույն ունեցող կոմպլեքս միացություններ. Al^{3+} -ի հետ՝ կարմիր, Cr^{3+} ՝ գորշ, Fe^{3+} ՝ մանուշակագույն [2, 56]:

Այսպիսով, որպեսզի օրգանական նյութը գունավորվի, կարևոր են հետևյալ պայմանները՝

- գուգորդված կապերի առկայությունը, ընդ որում կրկնակի կապերը կարող են առաջանալ ոչ միայն ածխածնի ատոմների միջև,
- քրոմոֆոր և աուքսոքրոմ խմբերի առկայությունը,
- արոմատիկ օղակների առկայությունը,
- կոմպլեքս միացության առաջացման հնարավորությունը,
- բևեռնացման հատկությունը, որը նկատվում է, երբ գուգորդված շղթայի ծայրերում գտնվում են տեղակալիչներ, որոնք նպաստում են էլեկտրոնների տեղափոխմանը,
- օրգանական նյութի մոլեկուլում ատոմները պետք է դասավորված լինեն նույն հարթությունում:

Այս բոլոր գործոնները հանգեցնում են նրան, որ լույսի քվանտը ազդում է մոլեկուլում էլեկտրոնների համակարգի վրա, և էլեկտրոնը ձեռք է բերում լրացուցիչ էներգիա: Այս էներգիայի մի մասը ծախսվում է մոլեկուլի շարժման և տարածման վրա, իսկ մեծ մասը ծախսվում է էլեկտրոնների գրգռված վիճակի անցնելու վրա:

Հետազոտության մեթոդները, փորձարարական վերլուծությունը և արդյունքները

Մեր կողմից իրականացվել և ուսումնասիրվել են ֆենոլի, բազմատոմ ֆենոլների և նրանց ածանցյալների կոմպլեքսագոյացման ռեակցիաները երկաթի (III) քլորիդի հետ: Դասագրքերում այս ռեակցիաների վերաբերյալ տրված են սուղ

տեղեկություններ: «Քիմիա» 11 դասագրքում ուղղակի նշված է «Ֆենոլի հայտնաբերման համար հաճախ օգտագործում են դրա ռեակցիան FeCl_3 -ի հետ, որի հետևանքով առաջանում է մանուշակագույն համալիր միացություն»:

Գունային փոփոխությունների պատճառները ուսումնասիրելու նպատակով պատրաստվել են՝


- ֆենոլի, ռեզորցինի, պիրոկատեխինի, հիդրոխինոնի, պիրազալի, կաթնաթթվի, կիտրոնաթթվի 1 %-անոց ջրային լուծույթներ,
- α - և β - նաֆտոլի, սալիցիլաթթվի, ասպիրինի, սալոլի, վանիլինի, պարացետամոլի 1 %-անոց սպիրտային լուծույթներ,
- երկաթի (III) քլորիդի 1 %-անոց ջրային լուծույթ:

2-3 մլ հետազոտվող լուծույթին ավելացրել ենք 1 մլ երկաթի (III) քլորիդի լուծույթ և հետևել գունային փոփոխությանը:


Աղյուսակ 2-ում ներկայացված են մի շարք հետազոտվող օրգանական նյութերի և երկաթի (III) քլորիդի փոխազդեցության հետևանքով գունային փոփոխությունները:

Աղյուսակ 2



Գունային փոփոխությունները

Օրգանական նյութ	Կառուցվածք	Վերջնական գույնը
Բենզոլ		չի փոխվում
Ֆենոլ		մանուշակագույն
Պրոպանաթթու	$\text{CH}_3 - \text{CH}_2 - \text{C} \begin{array}{l} \text{=O} \\ \text{OH} \end{array}$	չի փոխվում
Կաթնաթթու	$\text{H}_3\text{C} - \underset{\text{OH}}{\text{CH}} - \text{C} \begin{array}{l} \text{=O} \\ \text{OH} \end{array}$	դեղնականաչ
Պենտանաթթու	$\text{CH}_3 - \text{CH}_2 - \text{CH}_2 - \text{CH}_2 - \text{C} \begin{array}{l} \text{=O} \\ \text{O-H} \end{array}$	չի փոխվում
Կիտրոնաթթու		դեղնականաչ

Չնայած նրան, որ բենզոլի մոլեկուլում էլեկտրոնային ամպերը ապատեղայնացված են, սակայն այդ հանգամանքը բավարար չէ, որ փոխազդելով FeCl_3 -ի հետ՝ առաջացնի կոմպլեքս միացություն: Ի տարբերություն բենզոլի, ֆենոլն առաջացնում է մանուշակագույն կոմպլեքս (նկար 3, 4):



Նկար 3. Ֆենոլի հայտնաբերման որակական ռեակցիան




Նկար 4. Կոմպլեքս միացության կլանման սպեկտրը

Համեմատելով բենզոլի և ֆենոլի կառուցվածքը՝ կարելի է եզրակացնել, որ գունային փոփոխությունը տեղի է ունենում շնորհիվ քրոմոֆորային -OH խմբերի և կոմպլեքսագոյացման [6, 57]: Դրա ապացույցն է պրոպիլոնաթթու-կաթնաթթու, պենտանաթթու-կիտրոնաթթու զույգերի համեմատությունը: Պրոպանաթթուն և

պենտանաթթուն չեն առաջացնում կոմպլեքս միացություններ FeCl_3 -ի հետ, քանի որ դրանց մոլեկուլներում բացակայում են էլեկտրոդոնոր խմբեր, իրենք ունեն շատ թույլ կոորդինացիոն ունակություն:

Կաթնաթթուն և կիտրոնաթթուն առաջացնում են երկաթի լակտատ և ցիտրատ.







Ռեակցիաների արգասիքների վերլուծությունը վկայում են $-\text{OH}$ խմբի քրոմոֆորային բնույթի և կոմպլեքսագոյացման մասին:

Նյութի գույնը կախված է ոչ միայն էլեկտրոնների ապատեղայնացումից, քրոմոֆորային խմբերի առկայությունից, այլ նաև դրանց դիրքից և քանակից:

Աղյուսակ 3

Բազմատոմ ֆենոլների և Fe^{3+} իոնի կոմպլեքսների գույները


Բազմատոմ ֆենոլներ	Կառուցվածքը	Գույնը
Պիրոկատեխին		կանաչ
Ռեզորցին		մանուշակագույն
Հիդրոխինոն		դեղին
Պիրրազալոլ		կարմիր

Հիդրոխինոնը սկզբում գունավորվում է կանաչ, որը շատ արագ վեր է անվում դեղին խինոնի: Կանաչ գունավորումը վկայում է, որ հիդրոխինոնը արագ օքսիդանում է՝ առաջացնելով միջանկյալ նյութ՝ խինհիդրոն: $\text{O}-$, $\text{H}-$, $\text{H}-$ $-\text{OH}$ խմբերի դիրքից կախված տեղի է ունենում գույնի բարձրացում, այլ կերպ՝ գիպտոքրոմային տեղաշարժ: Նման երևույթ նկատվում է և պիրազալոլի դեպքում, որը պարունակում է 3 $-\text{OH}$ խումբ:

Մեր կոմից ուսումնասիրված են նաև մի քանի արոմատիկ օղակ պարունակող ֆենոլները: Հայտնի է, որ արոմատիկ օղակների ավելացումը բերում է գույնի խտացման [7, 439]:

Օրինակ՝

անտրացենը՝



անգույն է,

տետրացենը



նարնջագույն է,

պենտացենը



կապույտ է և այլն:

Հարց է առաջանում, թե ինչպես իրենց կոդսուորեն բազմակորիզ ֆենոլները: Ուսումնասիրել ենք α - և β - նաֆթոլների ռեակցիաները FeCl_3 -ի հետ:







α -նաֆթոլը՝  տալիս է մանուշակագույն գունավորում, իսկ

β -նաֆթոլը՝ , սկզբում տալիս է կանաչ գունավորում, իսկ հետագայում անջատվում է սպիտակ նստվածք: Այս փորձերը նույնպես վկայում են, որ $-\text{OH}$ խմբի դիրքը ազդում է ռեակցիայի ընթացքի վրա [3, 148]:

Ֆենոլների ածանցյալները կիրառում են որպես դեղամիջոցներ և մտնում են մի շարք սննդամթերքների բաղադրության մեջ: Որպես ֆենոլների ածանցյալներ ուսումնասիրել ենք սալիցիլաթթուն, ացետիլսալիցիլաթթուն, սալոլը, տանինը, վանիլինը և պարացետամոլը, որոնց գունային փոփոխությունները ներկայացված են աղյուսակ 4-ում:

Լրացուցիչ ֆունկցիոնալ խմբերի առկայությունը ազդում է կոմլեքսագոյացման մեխանիզմի վրա, ինչը երևում է աղյուսակ 4-ում: Սալիցիլաթթուն, որը պարունակում է ազատ $-\text{OH}$ խումբ, առաջացնում է մանուշակագույն կոմպլեքս: Սալոլը՝ սալիցիլաթթվի և ֆենոլի բարդ եթերը, նույնպես ունի ազատ $-\text{OH}$ խումբ և առաջացնում է մանուշակագույն կոմպլեքս միացություն, սակայն ասպիրինը՝ սալիցիլաթթվի և քացախաթթվի բարդ եթերը, որը չի պարունակում ազատ $-\text{OH}$ խումբ, չի փոխում իր գույնը: Վանիլինը՝ 3-մեթօքսի-4-հիդրօքսիբենզալդեհիդը գունավորվում է նույնպես մանուշակագույն, իսկ պարացետամոլը՝ 4-հիդրօքսի ֆենիլացետամիդ, գունավորվում է կանաչ: Հավանական է՝ այստեղ գույնի փոփոխությունը կախված է նաև $-\text{NH}$ քրոմոֆորային խմբի առկայությամբ: Տանինը ստացել ենք կադնու կեղևի թուրմից: Այն իրենից ներկայացնում է գալաթթվի բարդ եթերների խառնուրդ, որոնք պարունակում են մեծ թվով $-\text{OH}$ խմբեր: Դեռ հին ժամանակներում մի շարք բույսեր, որոնք պարունակում են տանիններ, օգտագործել են թանաք ստանալու համար, իսկ 19-րդ դարում՝ Fe^{3+} իոնների հայտնաբերման համար [3, 148]:

Գունային փոփոխությունները ֆենոլի ածանցյալների կոմպլեքսներում

Ֆենոլի ածանցյալ	Կառուցվածք	Գույն
Սալիցիլաթթու		մանուշակագույն
Ասպիրին		չի փոխվում
Սալոլ		մանուշակագույն
Վանիլին		մանուշակագույն
Պարացետամոլ		կանաչ
Տանին		մուգ մանուշակագույն

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ կոմպլեքս միացությունների առաջացման մեխանիզմը կախված է քրոմոֆորային խմբերի առկայությունից, իրենց դասավորվածությունից, բենզոլային օղակների առկայությունից և քանակից:

Եզրակացություն

Այսպիսով՝ ավագ դպրոցում ֆենոլների և նրանց ածանցյալների գունավոր ռեակցիաների վերաբերյալ լրացուցիչ նյութերի տրամադրումը թույլ է տալիս առավել ամբողջական պատկերացում կազմել դրանց հիմքում ընկած երևույթների վերաբերյալ, դասալրոցեւը դարձնել առավել հետաքրքիր, որը հնարավորություն է տալիս էապես բարձրացնել ուսուցման արդյունավետությունը: Մասնավորապես, սովորողները լրացուցիչ գիտելիքներ են ձեռք բերում թեմայի ուսուցման վերաբերյալ, իրականացվում է միջառարկայական և ներառարկայական կապեր, որոնք ունեն դիդակտիկական կարևոր նշանակություն:

DOI: <https://doi.org/10.58726/27382923-2025.1-102>

Գրականություն

1. Դանագույան Գ., Բազմերանգ արոմատիկություն, Երևան, «Աստղիկ» գրատուն, 2018, էջ 121-125:
2. Պետրոսյան Գ., Ադամյան Ռ., Կոմպլեքս միացություններ, Երևան, ԵՊՀ հրատ., 2023, 164 էջ:
3. Аверина А. В., Снегирева А. Я. Лабораторный практикум по органической химии, Москва: Высшая школа, 1971, - 224 с.
4. Бородкин В. Ф. Химия красителей, Москва: Химия, 1981, - 248 с.
5. Лиюгонький Б. И., Тугов И. И., Вайнштейн Э. Ф., Аванесова Н. Р., Влияние межмолекулярного взаимодействия на формирование свойств полисопряженных систем, Докл АН СССР т. 292, N1, 1987, с. 137-141.
6. Паравян Н.А. Что же там происходит? Химия и жизнь, №3, 197, с. 57-58.
7. Петров А.А., Бальян Х.В., Трощенко А.Т. Органическая химия, Москва: Высшая школа., 1981, - 592 с.
8. Тюкавкина Н. А., Бауков Ю.И. Биоорганическая химия, Москва: Медицина, 1985, -480 с.
9. Фадеев Г. Н., Химия и цвет, Москва: Просвещение, 1986, - 145 с.
10. Шульпин Г. Б. Эта увлекательная химия, Москва: Химия, 1984, с. 144-155.
11. <https://www.imdproc.am/p/qimia19-9> (24.03.25)

Предоставление дополнительных материалов по химии в старших классах как средство повышения эффективности обучения

*Аванесова Нелли,
Овсебян Анжела,
Коцинян Татевик*

Резюме

Ключевые слова: квант света, ароматические соединения, комплексообразование, хлорид (III) железа, хромофор, сопряженные связи

Качественные реакции дают возможность определить присутствие определенных молекул, атомов, ионов в исследованном образце. К данным реакциям относятся и известные реакции. Для возникновения того или иного цвета имеет значение состояние системы электронов, охватывающей всю молекулу в целом. Причем механизм образования цвета в неорганических и органических соединениях разный. Данная статья посвящена изучению изменения цвета органических соединений: в частности, процессам комплексообразования фенолов и их производных с хлористым железом. В статье изложены основные принципы теории цветности, рассмотрена зависимость изменения цвета от ряда факторов: структуры вещества, присутствия хромофорных и ауксохромных групп, сопряженных связей, ароматических колец. Рассмотренные факторы, которые влияют на ход протекания реакций комплексообразования и цвет образующихся комплексов. Показана главенствующая роль хромофорной группы -ОН в образовании цвета комплекса. Цвет комплексного соединения также зависит от количества хромофорных групп, их расположения в молекуле, наличия и количества бензольных ядер в исследованных образцах.

Providing Supplementary Materials from Chemistry as a Means of Raising Teaching Effectiveness

*Avanesova Nelly,
Hovsepyan Anzhela,
Kotsinyan Tatevik*

Summary

Key words: *quantum of light, aromatic compounds, complex formation, iron(III) chloride, chromophore, conjugated bonds*

Qualitative reactions allow the determination of the presence of specific molecules, atoms, and ions in a given sample. These reactions include many well-known tests. The state of the electron system – encompassing the entire molecule – is crucial for the manifestation of a particular color. Moreover, the mechanism of color formation differs between inorganic and organic compounds. This article is devoted to studying the changes in the color of organic compounds, particularly the complex formation processes of phenols and their derivatives with iron (III) chloride. The article presents the basic principles of coloration theory and examines how color changes depend on several factors: the substance's structure, the presence of chromophoric and auxochromic groups, conjugated bonds, and aromatic rings. The discussed factors influencing the course of complex formation reactions and the color of the resulting complexes demonstrate the dominant role of the chromophoric –OH group in generating the color of the complex. Furthermore, the color of the complex compound also depends on the number of chromophoric groups, their positions within the molecule, and the presence, the number of benzene rings in the analyzed samples.

Ներկայացվել է 29. 03. 2025 թ.
Գրախոսվել է 02. 05. 2025 թ.
Ընդունվել է տպագրության 05. 06. 2025թ.

Խնդիրներ, որոնց լուծումը բերում է դիֆերենցիալ հավասարման

Խաչատրյան Հարիսա

DOI: <https://doi.org/10.58726/27382923-2025.1-115>

Հանգուցային բառեր. *հավասարման տեսակ, լուծման մեթոդ, անկախ և կախյալ փոփոխականներ, նյութի խտություն, ցուցային աճ, նախնական պայման*

Մարդկային գործունեության տարբեր բնագավառներում ծագում են մի շարք խնդիրներ, որոնց լուծումը բերում է դիֆերենցիալ հավասարումների: Մրանց լուծման ժամանակ հիմնական խնդիրը համապատասխան դիֆերենցիալ հավասարումների կազմումն է, որովհետև այստեղ ընդհանուր մեթոդ գոյություն չունի, և յուրաքանչյուր խնդիր պահանջում է առանձնահատուկ մոտեցում: Դիֆերենցիալ հավասարումներ կազմելու վերաբերյալ խնդիրների լուծման ժամանակ լայնորեն օգտագործվում են ածանցյալի երկրաչափական ու ֆիզիկական իմաստները, ինչպես նաև բնական և սոցիալական գիտությունների հայտնի օրենքները: Դիֆերենցիալ հավասարումներ կազմելուց հետո գտնում են այդ դիֆերենցիալ հավասարումների լուծումը, որն իրենից ներկայացնում է թեկուզ և կարևոր, բայց մաքուր տեխնիկական խնդիր:

Դիֆերենցիալ հավասարումներ կազմելիս, հատկապես ֆիզիկական խնդիրներում, հաճախ նպատակահարմար է լինում կիրառել այսպես կոչված դիֆերենցիալների մեթոդը, երբ որոնելի մեծությունների անվերջ փոքր աճերի միջև մոտավոր հարաբերակցությունները, որոնք ճշմարիտ են բարձր կարգի անվերջ փոքրերի ճշգրտությամբ, փոխարինվում են նրանց դիֆերենցիալների միջև համապատասխան հարաբերակցություններով, ինչը չի անդրադառնում արդյունքի վրա:

Դիֆերենցիալ հավասարումները լայն կիրառություն ունեն երկրաչափության, մեխանիկայի, ֆիզիկայի, տեխնիկական և այլ գիտությունների մեջ:

Դիֆերենցիալ հավասարումներով խնդիրների լուծման ստանդարտ ձև գոյություն չունի: Յուրաքանչյուր խնդիր ունի իր ուրույն լուծման եղանակը, որը ցույց կտանք ստորև բերված օրինակներով:

Խնդիր 1 [2, 416]

Անոթում կա 100 լ ջրային խառնուրդ, որը պարունակում է 10 կգ աղ: Անոթի մեջ ջուրը լցվում է 1 ռոպեում 3 լ արագությամբ, և խառնուրդն անոթից դուրս է հոսում 1 ռոպեում 2 լ արագությամբ: Ընդ որում, լուծույթի խտությունը խառնելու միջոցով պահվում է հավասարաչափ: Որքա՞ն աղ կպարունակի անոթը 1 ժամ հետո:

Լուծում: Տվյալ նյութի C խտությունը կոչվում է նրա քանակը ծավալի 1 միավորում: Եթե խտությունը հավասարաչափ է, ապա V ծավալում նյութի քանակը հավասար է CV : Դիցուք t ռոպեից հետո անոթում աղի քանակը x կգ է: Այդ պահին անոթում ջրի քանակը կլինի $100 + t$, և հետևաբար խտությունը 1 լիտրում՝

$$C = \frac{x}{100 + t}:$$

Ժամանակի dt հատվածում անոթից դուրս կհոսի $2dt$ լիտր խառնուրդ, որը

կպարունակի $2Cdt$ կգ աղ: Ուստի աղի քանակի dx փոփոխությունը կրնութագրվի հետևյալ առնչությամբ:

$$-dx = 2Cdt = \frac{2x}{100+t}dt:$$

Հենց սա էլ որոնելի դիֆերենցիալ հավասարումն է:

Անջատելով փոփոխականները և ինտեգրելով՝ կստանանք

$$\ln x = -2 \ln(100+t) + \ln C$$

կամ

$$x = \frac{C}{(100+t)^2}:$$

C հաստատունը կորոշվի այն պայմանից, որ $t=0, x=10$: Այսինքն՝ $C=100000$:

1 ժամ անց անոթում կպարունակվի $x = \frac{100000}{160^2} \approx 3.9$ կգ աղ:

Խնդիր 2 [3, 273]

Նավակը հանգիստ ջրում շարժվում է $V_0 = 20$ կմ/ժ արագությամբ: Որոշել նավակի արագությունը շարժիչն անջատելուց 2 րոպե հետո, եթե 40 վրկ ընթացքում այն նվազել է մինչև $V_0 = 8$ կմ/ժ: Ջրի դիմադրությունը համեմատական է նավակի շարժման արագությանը:

Լուծում: Դիցուք ժամանակի t պահին նավակի շարժման արագությունը հավասար է V : Այդ դեպքում շարժվող նավակի վրա ազդում է $F = -kV$ ջրի դիմադրության ուժը: Բայց Նյուտոնի 2-րդ օրենքի համաձայն՝ $F = ma = m \frac{dV}{dt}$: Հետևաբար (1)-ը կընդունի հետևյալ տեսքը.

$$m \frac{dV}{dt} = -kV \text{ կամ } \frac{dV}{dt} = -\frac{kV}{m},$$

Սա ցուցչային աճի դիֆերենցիալ հավասարում է, ուստի նրա ընդհանուր լուծումը կլինի.

$$V(t) = Ce^{-\frac{kt}{m}}$$

C հաստատունը կգտնենք $V_0 = 20$ կմ/ժ սկզբնական պայմանից.

$$20 = Ce^{-\frac{k}{m}} \Leftrightarrow C = 20: V = 20e^{-\frac{kt}{m}}$$

Գտնենք $e^{-\frac{kt}{m}}$ հաստատունի արժեքը, որի համար օգտվենք այն պայմանից, որ $t = 40$ վրկ = $\frac{1}{90}$ ժամ դեպքում $V_1 = 8$ կմ/ժ

$$8 = 20e^{-\frac{k1}{m90}} \Leftrightarrow e^{-\frac{k}{m}} = \left(\frac{2}{5}\right)^{90}$$

(4)-ի մեջ տեղադրելով $t = 2$ ր = $\frac{1}{30}$ ժամ և $e^{-\frac{k}{m}} = \left(\frac{2}{5}\right)^{90}$ կստանանք որոնելի

արագությունը՝ $V = 20 \left(\left(\frac{2}{5}\right)^{90}\right)^{\frac{1}{30}} = \frac{32}{25} = 1,28$ կմ/ժ:


Խնդիր 3 [4, 443]

Որոշել այն հայելու ձևը, որն անդրադարձնում է տրված O կետից ելնող բոլոր ճառագայթները՝ տրված ուղղությամբ զուգահեռ:

Լուծում: Դիտարկենք հայելու հարթ կտրվածքը: Կոորդինատների սկզբնակետը տեղավորենք տրված O կետում, իսկ OY առանցքը ուղղենք տրված

ուղղությանը զուգահեռ: Այդ դեպքում OM ընկնող ճառագայթն է, ML -ը՝ անդրադարձնող ճառագայթը, MN -ը նորմալն է, MP -ն որոնելի կորի շոշափողն է: Քանի որ $\angle OMN = \angle NML$ ապա $ON = OM$, որտեղ $OM = \sqrt{x^2 + y^2}$, $ON = OK + KN = y + \frac{x}{y}$,

(NKM ուղղանկյուն եռանկյունուց գտնում ենք $KN = KM \operatorname{ctg} \alpha = \frac{KM}{\operatorname{tg} \alpha} = \frac{x}{y}$):



Չճապատկեր 1.

Ուստի $\sqrt{x^2 + y^2} = y + \frac{x}{y}$ կամ $\sqrt{x^2 + y^2} = y + x \frac{dx}{dy}, \frac{dx}{dy} = \frac{\sqrt{x^2 + y^2} - y}{x}$;

$$\frac{dx}{dy} = \frac{\sqrt{1 + \left(\frac{x}{y}\right)^2} - 1}{x} \quad (1)$$

Սա առաջին կարգի դիֆերենցիալ հավասարում է:

Նշանակենք $\frac{x}{y} = u$, $x = uy$, $\frac{dx}{dy} = u + \frac{du}{dy}$ y : Այդ դեպքում (1)-ը կընդունի հետևյալ տեսքը.

$$u + yu, \quad x = uy, \quad \frac{dx}{dy} = u + \frac{du}{dy} y \quad (2)$$

Ձևափոխություններից և փոփոխականների անջատումից հետո կստանանք՝

$$\frac{u du}{\sqrt{1 + u^2} - (1 + u^2)} = \frac{dy}{y}:$$

Նշանակենք $(1 + u^2) = z^2$, դիֆերենցենք $2u du = 2z dz$ կստանանք $\frac{z dz}{z(1-z)} = \frac{dy}{y}$ կամ $\frac{dz}{1-z} = \frac{dy}{y}$

Ինտեգրենք, կստանանք. $-\ln(z - 1) = \ln y + \ln C \Rightarrow Cy = \frac{1}{z-1}$: Քանի որ $z^2 = 1 + u^2 = 1 + \frac{x^2}{y^2} = \frac{y^2 + x^2}{y^2}$ ապա $Cy = \frac{y}{\sqrt{x^2 + y^2} - y}$ կամ $\sqrt{x^2 + y^2} - y = \frac{1}{C} = C_1$, որը ձևափոխելուց հետո կստանանք $y = \frac{x^2 - C_1^2}{2C_1}$ (պարաբոլ), որը (2) համասեռ հավասարման ընդհանուր լուծումն է: Ստացանք, որ հայելու ցանկացած հարթ հատվածը պարաբոլա է:

Խնդիր 4 [3, 270]

Կոնդեսատորը, որի ունակությունը Q է, միացված է E լարում և R դիմադրություն ունեցող շղթային: Որոշել կոնդեսատորի $q(t)$ լիցքը ժամանակի t պահին, եթե ժամանակի սկզբնական պահին այն հավասար է 0-ի:

Լուծում: Եթե ժամանակի t պահին կոնդեսատորի լիցքը հավասար է $q(t)$, ապա ժամանակի այդ պահին I հոսանքը հավասար է $\frac{dq}{dt}$: Իսկ E էլեկտրաշարժ ուժը հավասար է շղթայի U լարման և կոնդեսատորի $\frac{q}{Q}$ լարման տարբերությանը, այսինքն՝ $E = U - \frac{q}{Q}$: Օհմի օրենքի համաձայն՝ $I = \frac{E}{R}$, որտեղից՝

$$\frac{dq}{dt} = \frac{U - \frac{q}{Q}}{R} \text{ կամ } \frac{dq}{dt} + \frac{q}{QR} = \frac{U}{R}$$

Հավասարումը առաջին կարգի գծային դիֆերենցիալ հավասարում է: Նրա լուծման համար ներմուծենք $q = zv$ տեղադրումը, որտեղից՝ $\frac{dq}{dt} = z \frac{dv}{dt} + v \frac{dz}{dt}$

Հավասարումը կրնդունի հետևյալ տեսքը

$$z \frac{dv}{dt} + v \left(\frac{dz}{dt} + \frac{z}{QR} \right) = \frac{U}{R}$$

Գտնենք $\frac{dz}{dt} + \frac{z}{QR} = 0$ պայմանին բավարարող Z ֆունկցիան, այդ դեպքում հավասարումը կրնդունի հետևյալ տեսքը

$$z \frac{dv}{dt} = \frac{U}{R}, \quad \frac{dz}{z} = -\frac{dt}{QR}:$$

Ինտեգրենք, կստանանք $\ln z = -\frac{t}{QR}$ կամ $z = e^{-\frac{t}{QR}}$ որտեղից՝

$$e^{-\frac{t}{QR}} \frac{dv}{dt} = \frac{U}{R} \Leftrightarrow dv = \frac{U}{R} e^{\frac{t}{QR}} dt$$

$v = \int \frac{U}{R} e^{\frac{t}{QR}} dt \Rightarrow v = \frac{U}{R} Q R e^{\frac{t}{QR}} + C$ կամ $v = Q U e^{\frac{t}{QR}} + C$: Այսպիսով՝

$$q = Uv = e^{-\frac{t}{QR}} \left(Q U e^{\frac{t}{QR}} + C \right) \Rightarrow Q U + C e^{-\frac{t}{QR}}:$$

C հաստատունը $t = 0$ դեպքում $q = 0$ պայմանից՝ $0 = Q U + C e^0 \Leftrightarrow C = -Q U$: Այստեղից

$$q = Q U - Q U e^{-\frac{t}{QR}} = Q U \left(1 - e^{-\frac{t}{QR}} \right)$$

Այսպիսով՝ ստացանք ժամանակի ցանկացած t պահին կոնդեսատորի լիցքի բանաձևը:

Խնդիր 5 [5, 339]

Ջապանակի երկու ծայրերից կախված են միանման բեռներ: Կազմել շարժման հավասարումը, որը կկատարի այդ բեռներից մեկը, եթե մյուսը պոկվի:

Լուծում:

Դիցուք զսպանակի երկարության աճը հանգստի վիճակում բեռներից մեկի ազդեցության տակ հավասար է a , իսկ բեռի զանգվածը՝ m : x -ով նշանակենք բեռի կոորդինատը՝ հաշված հավասարակշռության դիրքից մեկ բեռի առկայության դեպքում (ուղղաձիգ): Այդ դեպքում

$$m \frac{d^2 x}{dt^2} = mg - k(x + a), \text{ որտեղ } k = \frac{mg}{a}, \text{ հետևաբար } \frac{d^2 x}{dt^2} = -\frac{gx}{a}.$$

Ընդհանուր լուծումը կլինի

$$x = c_1 \cos \sqrt{\frac{g}{a}} t + c_2 \sin \sqrt{\frac{g}{a}} t$$

նախնական պայմաններն են $x = a, \frac{dx}{dt} = 0, t = 0$, որտեղից $c_1 = a, c_2 = a$:

$$\text{Հետևաբար, } x = a \cos \sqrt{\frac{g}{a}} t:$$

Բնդիր 6 [4, 457]

Եթե մարմինը դանդաղ ընկղմվում է ջրի մեջ, ապա նրա V արագությունը և W արագացումը մոտավոր կապված են հետևյալ հավասարումով՝ $W = g - kV$, որտեղ g և k -ն հաստատուններ են: Պարզել անցած S ճանապարհի և t ժամանակի կապը, եթե $t = 0, S = V = 0$:

Լուծում:

Քանի որ $W = \frac{d^2 S}{dt^2}$ և $V = \frac{dS}{dt}$, ապա S -ի և t -ի միջև կապն արտահայտվում է երկրորդ կարգի դիֆերենցիալ, հավասարումով՝ $\frac{d^2 S}{dt^2} = g - k \frac{dS}{dt}$, որը չի պարունակում անհայտ S ֆունկցիա: Տեղադրելով այստեղ $V = \frac{dS}{dt}$ և $\frac{d^2 S}{dt^2} = \frac{dV}{dt}$ կստանանք առաջին կարգի դիֆերենցիալ հավասարում $V(t)$ -ի նկատմամբ. $\frac{dV}{dt} = g - kV$ կամ $\frac{dV}{g - kV} = dt$:

$$\text{Բնտեգրենք, կստանանք } -\frac{1}{k} \ln(g - kV) = t + c_1:$$

$$\text{Որոշենք } c_1\text{-ը՝ հաշվի առնելով, որ } V_0 = 0, -\frac{1}{k} \ln g = c_1:$$

$$\text{Ձևափոխություններից հետո կստանանք } t = \ln \left(\frac{g}{g - kV} \right)^{\frac{1}{k}} \text{ կամ } \frac{g}{g - kV} = x^k \Leftrightarrow V = \frac{dS}{dt} = \frac{g}{k} (1 - e^{-kt}): \text{ Անջատենք փոփոխականները և ինտեգրենք}$$

$$S(t) = \frac{g}{k} \int (1 - e^{-kt}) dt + c_2 \text{ կամ } () = + \frac{g}{k} - + c_2:$$

$$(\mathcal{O}) = \mathcal{O} \text{ նախնական պայմանից որոշենք } \mathcal{O} = \frac{g}{k} + c_2, c_2 = -\frac{g}{k}$$

որտեղից կստանանք որոնելի կապը.

$$() = + \frac{g}{k} (- - t):$$

DOI: <https://doi.org/10.58726/27382923-2025.1-115>

Գրականություն

1. Վալուցե Ի. Ի., Դիլիգով Չ. Դ., Մաթեմատիկա, Երևան, 1986, 495 էջ:
2. Бермант А.Ф., Араманович И.Г. Краткий курс математического анализа, Москва, 1977, 886 с.
3. Демидович Б.П. Задачи и упражнения по математическому анализу, Москва, 1963, 472 с.
4. Дюбюк П. Е. и др. Сборник задач по курсу высшей математики, Москва, 1965, 591 с.
5. Заположец Г.И. Руководство к решению задач по математическому анализу, Москва, 1966, 460 с.

Задачи, решение которых приводит к дифференциальному уравнению

Хачатрян Лариса

Резюме

Ключевые слова: тип уравнения, метод решения, независимые и зависимые переменные, плотность вещества, показательный рост, начальное условие

В работе рассматривается ряд задач, относящихся к различным областям, для решения которых широко используются дифференциальные уравнения. На основе законов данной области составляются соответствующие дифференциальные уравнения. Основной целью исследователя должно быть получение уравнения функциональной зависимости между переменными параметрами заданного процесса. Большинство таких уравнений сводятся к дифференциальному уравнению, которое содержит производные или дифференциалы неизвестной функции. Решить это уравнение (путем интегрирования) – значит получить уравнение, не содержащее производных и дифференциалов, из которого данное уравнение следует как следствие. При решении задач, связанных с составлением дифференциальных уравнений, широко используются геометрический и физический смысл производной, а также известные законы естественных и общественных наук. Формулировка дифференциального уравнения, отвечающего условиям научной или технической задачи, означает, прежде всего, решение о том, какую из переменных в задаче следует считать независимой переменной, а какую – зависимой переменной, а затем нахождение математической связи между переменными величинами и их приращениями. Решение полученного дифференциального уравнения представляет собой важную, но чисто техническую проблему.

Problems, Solutions of which Lead to a Differential Equation

Khachatryan Larisa

Summary

Key words: *equation type, solution method, independent and dependent variables, substance density, exponential growth, initial condition*

The paper considers a number of problems related to various fields, for the solution of which differential equations are widely used. Based on the laws of a given field, the corresponding differential equations are compiled. The main goal of the researcher should obtain an equation of the functional dependence between the variable parameters of a given process. Most of such equations are reduced to a differential equation that contains derivatives or differentials of an unknown function. To solve this equation means to obtain an equation that does not contain derivatives and differentials, from which this equation follows as a consequence. When solving problems related to the compilation of differential equations, the geometric and physical meaning of the derivative, as well as the known laws of natural and social sciences, are widely used. The formulation of a differential equation that meets the conditions of a scientific or technical problem means deciding which of the variables in the problem should be considered an independent variable, and which one should be considered a dependent variable, and then finding a mathematical relationship between the variables and their increments. The solution of the resulting differential equation is an important, but purely technical problem.

Ներկայացվել է 05. 03. 2025 թ.
Գրախոսվել է 27. 03. 2025 թ.
Ընդունվել է տպագրության 05. 06. 2025թ.

**STEM կրթությունը ավագ դպրոցում
«Ածխաջրեր» թեմայի դասավանդման ժամանակ**

**Հովսեփյան Վարդուհի,
Մարկարյան Ռաիսա**

DOI: <https://doi.org/10.58726/27382923-2025.1-122>

Հանգուցային բառեր. գլյուկոզ, օսլա, սննդանյութեր, պարզ շաքարներ, կենսաբանություն, քիմիա

Այսօր կրթական գործընթացն անհնար է պատկերացնել առանց դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացմանը նպաստող նոր, ավելի արդյունավետ տեխնոլոգիաների որոնման [4]: Ժամանակակից կրթական համակարգերը բախվում են արագ փոփոխվող տեխնոլոգիական պայմաններին հարմարվելու անհրաժեշտության: Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն են ստանում ուսուցման մեթոդները STEM կրթության մեջ, քանի որ այն ուղղված է աշակերտների ոչ միայն տեսական գիտելիքների, այլև իրական կյանքում կիրառելի հմտությունների զարգացմանը [10]:

STEM կրթությունը միավորում է չորս ոլորտներ՝ գիտություն (Science), տեխնոլոգիա (Technology), ճարտարագիտություն (Engineering) և մաթեմատիկա (Mathematics)՝ միտելով ստեղծել համապարփակ մոտեցում, որը հնարավորություն է տալիս աշակերտներին տեսնել այս գիտական ոլորտների միջև կապերը և կիրառել դրանք իրական աշխարհի խնդիրների լուծման մեջ:

STEM կրթությունը խոստումնալից և արդյունավետ մոտեցում է աշակերտներին ապագա մարտահրավերներին նախապատրաստելու համար: Գիտության, տեխնիկայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի ինտեգրումը կրթական գործընթացին նպաստում է այսօրվա միջավայրում հաջող մասնագիտական կարիերայի համար անհրաժեշտ հմտությունների զարգացմանը [10]:

Ուսուցման մոտիվացիայի զարգացմանը նպաստում են ուսումնական գործընթացի բարելավման բոլոր միջոցները [11].

- բովանդակության թարմացում և միջառարկայական կապերի ամրապնդում, ուսուցման մեթոդների կատարելագործում,
- խնդրահարույց ուսուցման բոլոր տեսակների կիրառում,
- անհատական, կոլեկտիվ և խմբային աշխատանքի տարբեր ձևերի կիրառում և այլն:

Ուսուցման մեթոդները STEM կրթության մեջ հնարավորություն են տալիս բարձրացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը և երաշխավորել պլանավորված ուսումնական արդյունքների ձեռքբերումը: Հիմնական շեշտը դրված է աշակերտի անհատականության և անհատի կրթական մակարդակի ձևավորման համար պայմաններ ստեղծելու վրա: Ուսուցման մեթոդները թույլ են տալիս ուսուցչին տրամաբանական կապեր հաստատել ուսումնասիրվող առար-

կաների միջև, ինչը բարձրացնում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը: Բացի այդ, տեղի է ունենում վերապատրաստման տեղափոխում առարկայի վրա, որն ապահովում է ուսանողի մտիվացիոն ոլորտի զարգացումը, խելքը, անկախությունը, կոլեկտիվիզմի զգացումը և նրանց կրթական և ճանաչողական գործունեությունը վերահսկելու և կառավարելու կարողությունը [7]: Այսօր, թե որքանով է հասարակությունը պատրաստ նորարարական տեխնոլոգիաների համատարած ներդրմանը, կախված է յուրաքանչյուր ուսուցիչից, նրա հմտություններից և անձնական հետաքրքրությունից: Երբ ուսուցիչները ստեղծագործական մոտեցում են ցուցաբերում STEM կրթությանը, աշակերտների զարգացման հնարավորություններն անսահման են [11]:

STEM կրթության առավելությունները [6].

- **Քննադատական մտածողության զարգացում** – աշակերտները սովորում են վերլուծել խնդիրներ, գտնել ոչ ստանդարտ լուծումներ և հիմնավորել իրենց եզրակացությունները:
- **Ապագա մասնագիտություններին պատրաստում** – 21-րդ դարում պահանջարկ ունեցող հմտությունների զարգացում:
- **Գիտության և տեխնոլոգիայի նկատմամբ հետաքրքրության աճ**՝ ինտերակտիվ օգտագործման միջոցով ուսուցման մեթոդները ուսուցման գործընթացը դարձնում են ավելի զվարճալի:
- **Գործնական կենտրոնացում** – աշակերտները ձեռք են բերում կիրառման փորձ

տեսական գիտելիքներ իրական պայմաններում:

STEM կրթական գործընթացում ինտեգրելու մեթոդներ.

- **Լաբորատոր աշխատանք և փորձեր** – աշակերտները կատարում են հետազոտություն, մոդելավորում գործընթացները և վերլուծում արդյունքները:
- **Ինժեներական նախագծեր** – աշակերտները մշակում են սարքերի նախատիպերը և ստուգում դրանց կատարումը:
- **Թվային տեխնոլոգիաների կիրառում** – 3D մոդելավորման կիրառում, ռոբոտաշինությունն ու ծրագրավորումն ընդլայնում են ուսուցման հնարավորությունները:
- **Միջառարկայական դասեր**՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրում, որը թույլ է տալիս ձևավորել ամբողջական պատկերացում աշխարհի մասին:

STEM կրթությունը կարող է իրականացվել դասարանում տարբեր ձևերով: Օրինակ, ուսուցիչները կարող են օգտագործել նախագծի վրա հիմնված ուսուցում, նախագծման առաջադրանքներ և հարցումների վրա հիմնված ուսումնական գործողություններ:

«Քիմիա» առարկայի գլխավոր նպատակն է սովորողների մեջ քիմիական գիտելիքների համակարգումը և դրանց կիրառման հմտությունների ձևավորումը,

որպեսզի նրանք դառնան ժամանակակից արագ փոփոխվող հասարակության լիարժեք անդամ և նախապատրաստվեն քիմիային առնչվող հետազոտությունները կամ կարիերային: Դպրոցական քիմիայի ուսումնական ծրագրի բովանդակությունը նպաստում է նյութի մտապահմանը, սակայն չի զարգացնում սովորողների ստեղծագործական մտածողության գործունեությունը: Այս պայմաններում ուսուցիչը պետք է օգտագործի նորարարական մեթոդներ, որոնք բարձրացնում են աշակերտների մոտիվացիան և ինքնավստահությունը՝ առաջացնելով դրական հույզեր և հետաքրքրություն ուսումնական գործընթացի նկատմամբ [5]:

Աշակերտների հետաքրքրությունները քիմիա առարկայի դասավանդման ընթացքում կարող են զարգանալ միայն այն դեպքում, երբ նրանք ակտիվ մասնակցում են նոր նյութի յուրացմանը և ինքնուրույն՝ սեփական պրիզմայի միջով անցկացնելով, են կատարում վերջնական եզրահանգումները [3]: Դասավանդումը պետք է իրականացվի համագործակցության և հետազոտության վրա հիմնված ուսումնառության սկզբունքով, դասավանդող ուսուցիչը դասավանդման և ուսումնառության գործընթացը պետք է հարմարեցնի սովորողների առանձնահատկություններին, նախասիրություններին և կարողություններին, ուստի կարևոր է դասավանդման ընթացքում ուսուցչի ստեղծագործական մոտեցումը տարբերակված ուսուցման տարաբնույթ մարտավարությունները, մեթոդների բազմազանությունը և հետաքրքրությունը, որոնք ուղղակիորեն կապված կլինեն ծրագրի նպատակներին և ակնկալվող վերջնարդյունքներին: Ուսուցչի ստեղծագործական մոտեցումը ենթադրում է ուսուցման նոր մոտեցումների, մեթոդների, հնարների ներդրում, որոնք նպատակ ունեն սովորողների մեջ ձևավորել «Քիմիա» առարկայի նկատմամբ դրական վերաբերմունք և կապահովեն սովորողների ակտիվ մասնակցությունը ուսումնական գործընթացին [5]:

Ավագ դպրոցում ածխաջրերի ուսուցումը կենսաբանության և քիմիայի ուսումնական ծրագրերի կարևոր բաղադրիչն է, քանի որ այն օգնում է աշակերտներին հասկանալ կենսաքիմիական կարևոր գործընթացները և դրանց նշանակությունը առօրյա կյանքում: Դասախոսությունների վրա հիմնված ավանդական մեթոդները երբեմն կարող են չներգրավել ուսանողներին, ուստի անհրաժեշտ են նորարարական և ինտերակտիվ մոտեցումներ՝ ուսումնական ավելի բովանդակալից և հաճելի դարձնելու համար:

Ավագ դպրոցում ածխաջրեր թեմայի շրջանակում աշակերտը պետք է.

- նկարագրի գլյուկոզի խմորման ռեակցիաները և կիրառությունը,
- ներկայացնի և թվարկի էներգիայի աղբյուր հանդիսացող սննդանյութերը (ածխաջրեր, սպիտակուցներ, ճարպեր) և համեմատի դրանց էներգետիկ արժեքները,
- բացատրի, որ ածխաջրերի և ճարպերի օքսիդացումը օրգանիզմում ապահովում է մարդուն անհրաժեշտ էներգիայի մեծ մասը (մոտ 85 %-ը):

Հոդվածում ներկայացվում են գործնական առաջադրանքներ STEM կրթության ոլորտում, որոնք ուսուցիչը կարող է օգտագործել դասի ընթացքում ածխաջրեր թեման դասավանդելիս:

Թեմա: Ածխաջրեր, նրանց պարունակությունը սննդում և նշանակությունը մարդու համար

Դասարան: 11-րդ

Նպատակ: Սովորողները դիտարկման, փորձերի և վերլուծության միջոցով կկարողանան հասկանալ ածխաջրերի կառուցվածքը և դասակարգումը, պարունակությունը սննդում և նրանց նշանակությունը մարդու համար՝ կիրառելով STEM հմտություններ:

Միջառարկայական կապեր: Զիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա, ինֆորմատիկա:

Կենսաբանություն – Դասի ընթացքում ուսուցիչը ներկայացնում է, որ ածխաջրերը մեր սննդի կարևոր բաղադրիչ մասն են կազմում, և սննդից օրգանիզմը ստանում է էներգիայի 50-70 %-ը:

Գործնական առաջադրանք՝ սննդի մեջ ածխաջրերի ստուգում:

Նպատակը. օգտագործելով պարզ կենսաքիմիական թեստեր՝ պարզել ածխաջրերի առկայությունը սննդում:

Պահանջվող նյութեր՝ փորձանոթներ, պիպետներ, բաժակ, հավանգ, ջրային բաղնիք, յոդի լուծույթ, Բենեդիկտի լուծույթ, սնունդ (կարտոֆիլ, խնձոր, հաց և այլն):

Օսլայի փորձարկում

Պատրաստեք սննդի նմուշները՝ տրորելով և մի փոքր ջրի հետ խառնելով:

Յուրաքանչյուր նմուշի փոքր քանակությունը դրեք փորձանոթի մեջ:

Յուրաքանչյուր փորձանոթի մեջ ավելացրեք մի քանի կաթիլ յոդի լուծույթ:

Դիտեք գույնի փոփոխությունը:

Կապույտ/սև գույնը ցույց է տալիս օսլայի առկայությունը:

Պարզ շաքարների փորձարկում (Բենեդիկտի թեստ)

Տեղադրեք յուրաքանչյուր սննդամթերքի նոր նմուշ մաքուր փորձանոթի մեջ:

Փորձանոթի մեջ ավելացրեք նույն քանակությամբ Բենեդիկտի լուծույթ:

Փորձանոթը 5 րոպեով դրեք ջրային բաղնիքի մեջ:

Դիտեք գույնի փոփոխությունը:

Կապույտից կանաչ/դեղին/նարնջագույն/կարմիր գույնի փոփոխությունը ցույց է տալիս վերականգնող շաքարների առկայությունը (օրինակ՝ գլյուկոզ կամ ֆրուկտոզ):

Արդյունքները գրանցեք աղյուսակում

Սննդի նմուշ	Յոդի թեստ	Բենեդիկտի թեստ
կարտոֆիլ	Կապույտ/սև	Չի փոխվում
խնձոր	Չի փոխվում	Նարնջագույն
հաց	Կապույտ/սև	դեղին

Հարց – Ո՞ր մթերքներն են պարունակում օսլա, որո՞նք են պարունակում պարզ շաքարներ: Ինչպե՞ս են բարդ ածխաջրերը կառուցվածքով և ֆունկցիաներով տարբերվում պարզ շաքարներից:

Քիմիա – Ներկայացնում է ածխաջրերի ընդհանուր բանաձևը, նրանց կառուցվածքը և դասակարգումը միաշաքարների, երկշաքարների և բազմաշաքարների:

Ածխաջրերը օրգանական մոլեկուլներ են, որոնք կազմված են ածխածնից (C), ջրածնից (H) և թթվածնից (O):

Դրանք դասակարգվում են.

- Միաշաքարներ (պարզ շաքարներ, ինչպիսիք են գլյուկոզը, ֆրուկտոզը):
- Երկշաքարներ (ինչպիսիք են սախարոզան, կաթնաշաքարը):
- Բազմաշաքարներ (ինչպիսիք են օսլան, ցելյուլոզան):

Ներկայացվում են նրանց կառուցվածքները:

Գործնական առաջադրանք՝ ածխաջրերի փորձարկում:

Նպատակը՝ հասկանալ ածխաջրերի կառուցվածքը և դասակարգումը դիտարկման, փորձերի և վերլուծության միջոցով:

Պահանջվող նյութեր՝ փորձանոթներ, պիպետներ, բաժակ, ջրային բաղնիք, յոդի լուծույթ, Բենեդիկտի լուծույթ, գլյուկոզի լուծույթ, սասխարոզի լուծույթ, օսլայի լուծույթ:

Փորձարկվող նյութեր	Օգտագործվող նյութեր	Սպասվող արդյունքը
Օսլա 2 մլ	Մի քանի կաթիլ յոդի լուծույթ	Կապույտ/սև գույնը վկայում է օսլայի առկայության մասին
Սախարոզ 2 մլ	Բենեդիկտի լուծույթ 2 մլ և տաքացնել 5 րոպե ջրային բաղնիքում	Չվերականգնող շաքար է, չպետք է փոխի գույնը, եթե հիդրոլիզացված չէ:
Գլյուկոզ 2 մլ	Բենեդիկտի լուծույթ 2 մլ և տաքացնել 5 րոպե ջրային բաղնիքում	Վերականգնվող շաքար է, պետք է դառնա կանաչ/դեղին/նարնջագույն/կարմիր:

Գործնական աշխատանքից հետո ուսուցիչը տալիս է հետևյալ հարցերը՝

1. Ելնելով ձեր արդյունքներից՝ դասակարգեք ստուգված շաքարները միաշաքարների, երկշաքարների կամ բազմաշաքարների:
2. Բացատրեք, թե ինչու է Բենեդիկտի թեստը դրական գլյուկոզի, բայց բացասական է սախարոզի համար:
3. Քննարկեք, թե ինչպես է միաշաքարների կառուցվածքը տարբերվում բազմաշաքարներից:

Կենսաբանություն՝ Գլյուկոզը էներգիայի կարևոր աղբյուր է կենդանի օրգանիզմների համար: Առողջ մարդու օրգանիզմում գլյուկոզի քանակությունը արյան մեջ չպետք է գերազանցի 6,7մմոլ/լ: Ֆիզիկական ծանրաբեռնվածության ժամանակ

նակ գլուկոզի քանակությունը իջնում է: Գլուկոզի օքսիդացման հետևանքով առաջանում է էներգիա ԱԵՖ ձևով:

Քիմիա – ուսումնասիրում են գլուկոզի կառուցվածքը, ացիլիկ և ցիկլիկ ձևերը: Գրում են գլուկոզի օքսիդացման ռեակցիան:

Առաջադրանք: Պատկերացրեք, որ դուք սննդաբաններ եք, և ձեր առջև դրված է հետևյալ խնդիրը: Դուք պետք է կազմեք հատուկ առողջ սննդակարգ քսանամյա երիտասարդի համար: Վերջինս ակտիվ զբաղվում է սպորտով և զբաղվում է իր կրթությամբ, ցանկանում է դառնալ աշխարհահռչակ ծրագրավորող: Սննդակարգը պետք է լինի առողջ և ապահովի օրվա համար բավարար քանակությամբ էներգիա երիտասարդի համար:

Մաթեմատիկա – աշակերտները հաշվում են իրենց կողմից ընտրված մթերքների էներգետիկ արժեքները: Առանձնացնում են այն մթերքները, որոնք էներգետիկ տեսակետից ավելի շահավետ են օրգանիզմի համար:

Ինֆորմատիկա՝ Աշակերտներն իրենց կազմած սննդակարգը, ստացված արդյունքները և տվյալները ներկայացնում են շնորհանդեսի ձևով:

STEM կապեր

Գիտություն՝ սննդանյութերի կենսաքիմիա, սննդի գիտություն:

Տեխնոլոգիա՝ լաբորատոր սարքավորումների և փորձարկման տեխնիկայի օգտագործում:

Ճարտարագիտություն՝ սննդի փորձարկման լաբորատորիաներում գործընթացների իմացություն:

Մաթեմատիկա՝ տվյալների հավաքագրում, վերլուծություն և գծապատկերների ստեղծում:

STEM կրթությունը հնարավորություն է տալիս աշակերտներին ընկալել տարբեր գիտական ոլորտների միջև կապերն ու դրանց կիրառական նշանակությունը իրական կյանքում: Ածխաջրերի թեման, որը ներառում է ինչպես քիմիական, այնպես էլ կենսաբանական ասպեկտներ, գերազանց օրինակ է STEM կրթության տարբեր մեթոդների կիրառման համար: STEM կրթությունը ոչ միայն գիտելիքների փոխանցում է ապահովում, այլև նպաստում է աշակերտների ինքնուրույն մտածելակերպի զարգացմանը, հաղորդակցման հմտությունների բարելավմանը և մրցունակ մասնագետներ պատրաստելուն՝ հաշվի առնելով 21-րդ դարի պահանջները: Այն նաև թույլ է տալիս աշակերտներին ապահովել ակտիվ մասնակցություն փորձերի և նախագծերի միջոցով, ինչն ուժեղացնում է նրանց մոտիվացիան և առաջացնում դրական հույզեր ուսումնական գործընթացի նկատմամբ:

Այսպիսով, STEM կրթությունը անփոխարինելի գործիք է աշակերտների համար՝ զարգացնելով ոչ միայն գիտական ու կիրառական հմտությունները, այլև պատրաստելով նրանց բարդ մարտահրավերների լուծմանը նորարարական և համակարգային մոտեցմամբ:

Գրականություն

1. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Քիմիա» առարկայի 8-րդ և 11-րդ դասարանների առարկայական ծրագիր, հրաման № 74-Ն, 03 հուլիս, 2023 թ.:
2. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Քիմիա» առարկայի 7-9-րդ և 10-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչ, հրաման № 43-Ն 30 մարտ, 2023 թ.:
3. Սահակյան Վ. Ա, Համագործակցային ուսուցում: Դասավանդման մեթոդիկա N 1., Գիտական տեղեկագիր, 2020, էջ 279:
4. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամ, «Հայաստան» հրատ., 2020, 74 էջ:
5. «Քիմիա» առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագրեր (7-12-րդ դասարաններ), ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021թ. ապրիլի 30 № 152 հրաման:
6. Атанепесов Б., Акмырадов М., Гайыпова Э., Метод обучения STEM, Международный научный журнал «Символ науки» 10-2, с.157-159, 2023.
7. Николайчук Л. Н. Современные образовательные технологии и их использование в преподавании химии, Нефтекумск, 2019.
8. Практические задания в области STEM-образования: Сборник в трех томах. Том 2. Задания для работы с учащимися 5-11 классов / Редактор и составитель А. С. Обухов. Научный консультант С. А. Ловягин. Москва: Библиотека журнала «Исследователь/ Researcher», 2022, - 266 с.
9. Практические задания в области STEM-образования: Сборник в трех томах. Том 3. Задания для работы с учащимися 7-10 классов из практики Великобритании и США / Редактор и составитель А. С. Обухов. Научный консультант С. А. Ловягин. Москва: Библиотека журнала «Исследователь/ Researcher», 2022, - 72 с.
10. Хатджиева М.М., Кулиева О.К., Хатджиева О.К., Метод STEM-обучения: инновационный подход в современном образовании. Международный научный журнал «Вестник науки» № 2 (83), том 3, 2025, с. 339-343.
11. Ozhibayeva Z. M., Nurmuhambetova N. N., Use of stem-technologies as a way of increasing the motivation of students in Chemistry lessons in the conditions of education update in the republic of Kazakhstan, Scientific atlas, № 4, 2021, p. 52-59.

STEM-образование в средней школе при преподавании темы «Углеводы»

*Овсепян Вардуи,
Маркарян Раиса*

Резюме

Ключевые слова: глюкоза, крахмал, питательные вещества, простые сахара, биология, химия

Изучение углеводов в старших классах является важным компонентом учебных программ, так как это помогает ученикам понимать важные биохимические процессы и их значение в повседневной жизни. Интерес учеников во время обучения химии может развиваться только в том случае, если они активно участвуют в освоении нового материала и самостоятельно, пропуская через собственную призму, делают окончательные выводы. Основанные на лекциях традиционные методы иногда могут не привлечь студентов, следовательно, для того, чтоб учеба стала значимой и привлекательной, необходимы инновационные и интерактивные подходы. В этом контексте приобретает особое значение метод STEM-образования, так как оно направлено не только на теоретические знания учеников, но и развитие навыков, применимых в реальной жизни. STEM-образование – это многообещающий и эффективный подход к подготовке учащихся к будущим испытаниям. В работе представлены практические задания в сфере STEM-образования, которые позволят ученикам наглядно понять структуру и классификацию углеводов с помощью экспериментов и анализов, их значение и применение в питании, используя STEM-навыки.

STEM Education in High School during the Teaching of “Carbohydrates”

Hovsepyan Varduhi,

Markaryan Raisa

Summary

Key words: *glucose, starch, nutrients, simple sugars, biology, chemistry*

The study of carbohydrates in high school is an important component of the curriculum, as it helps students understand important biochemical processes and their significance in everyday life. Students' interest in chemistry can only grow if they actively engage with new material and draw their own conclusions independently. Traditional lecture-based methods may sometimes not motivate students, so innovative and interactive approaches are needed to make learning meaningful and interesting. In this context, STEM education takes on special significance. It is aimed not only at mastering theoretical knowledge of students but also at developing practical skills applicable in real life. STEM education is a promising and effective approach to preparing students for future changes. The work presents practical tasks in the field of STEM education allowing students using STEM skills to clearly understand the structure and classification of carbohydrates, their importance and application in nutrition through experiments and analyses.

Ներկայացվել է 14. 04. 2025 թ.

Գրախոսվել է 08. 05. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 05. 06. 2025թ.

**Ստեղծագործական մտածողության բաղադրիչների ձևավորումը
ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցման գործընթացում***

Մանուկյան Վարդան

DOI: <https://doi.org/10.58726/27382923-2025.1-131>

Հանգուցային բառեր. *զարգացում, խնդիր, ինքնուրույնություն, ձկունություն, սահունություն, յուրօրինակություն, խորություն, ընդգրկունություն*

Նախաբան

Սովորողների մոտ ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը արդի մանկավարժության հիմնախնդիրներից է: Պարզ է, որ զարգացող հասարակություն ունենալու տեսանկյունից ստեղծագործ անհատների առկայությունը պարտադիր է: Յուրաքանչյուր անձի մոտ ստեղծագործական մտածողությունը ունի որոշակի աստիճան և դրսևորվում է յուրովի: Շատ կարևոր է, որ յուրաքանչյուր ոք, անկախ իր զարգացվածության աստիճանից, գիտակցի ու կարևորի նորը ստեղծելու անհրաժեշտությունը: Հակառակ դեպքում չի խրախուսվի նոր գաղափարների գեներացիան, ինչն էլ կխոչընդոտի հասարակության զարգացմանը: Կարևորելով ստեղծագործական մտածողության դերը ուսուցման գործընթացում մանկավարժների և հոգեբանների կողմից՝ այս ուղղությամբ կատարվել են բազմաթիվ կարևոր հետազոտություններ: Ընդ որում, վերլուծվել է ստեղծագործական մտածողության էությունը, մատնանշվել են դրա կառուցվածքային տարրերը, ինչպես նաև հետազոտվել են ստեղծագործական մտածողության վրա ազդող էական գործոնները: Այս ամենը արված է հիմնականում ընդհանուր հոգեբանամանկավարժական տեսանկյունից, սակայն գիտամեթոդական բնույթ կրող արդի հոդվածներում նաև շեշտադրվում է տարբեր առարկաների ուսուցման մեջ ստեղծագործական մտածողության զարգացման կարևորությունը:

Սույն աշխատանքում ներկայացված են հոգեբանամանկավարժական բնույթ կրող հիմնարար աշխատանքներում հետազոտողների կողմից առանձնացված ստեղծագործական մտածողության հիմնական կառուցվածքային տարրերը և բերված են դրանց դրսևորումները մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցման գործընթացում: Ներկայացված են կոնկրետ օրինակներ և արված են մեթոդական շեշտադրումներ, ինչն էլ սույն աշխատանքի հիմնական գիտամեթոդական նորույթն է:

**Ստեղծագործական մտածողության կառուցվածքային տարրերը ֆիզիկայի և
մաթեմատիկայի ուսուցման գործընթացում**

Ստորև հերթականությամբ կթվարկենք հոգեբանների կողմից առանձնացված ստեղծագործական մտածողության հիմնական բաղադրամասերը [2], համա-

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀԳԳՄՄՆ ԲԿԳԿ-ի ֆինանսական աջակցությամբ՝ 25RG-5C032 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

ռոտ կներկայացնենք դրանց էությունը և ապա դրանք կդիտարկենք ֆիզիկայի և մաթեմատիկայի արդյունավետ ուսուցման կոնտեքստում:

Մտածողության սահունություն: Ստեղծագործական մտածողության այս բաղադրիչի առկայությունը ենթադրում է պրոբլեմի հնարավոր լուծում ապահովող գաղափարների հոսքի արագ առաջ քաշելու ընդունակություն [3, 6]: Ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցման մեջ մտածողության այս բաղադրամասի ձևավորումն ունի կարևոր նշանակություն, քանի որ խնդիրների և վարժությունների լուծման հատկապես սկզբնական փուլում շատ կարևոր է արագ կողմնորոշվել և ուղենշել դրանց լուծման համար կիրառվելիք մոտեցումները: Առարկայական գիտելիքների կուտակմանը զուգընթաց աշակերտների մոտ անհրաժեշտ է ձևավորել և զարգացնել սահուն անդրադարձի միջոցով այդ ամենից կոնկրետ առաջադրանքի լուծման համար անհրաժեշտ ու կիրառելի բանաձևերի, օրենքների ու օրինաչափությունների ընտրության հմտություններ: Ուսումնական գրականության մեջ սովորաբար խնդիրը կամ վարժությունը տեղադրված է լինում համապատասխան բաժնում, ինչը աշակերտին ընդհանուր առմամբ հուշում է թե ինչ գիտելիքներ է անհրաժեշտ կիրառել դրա լուծման համար: Դասավանդման փորձը ցույց է տալիս, որ նման «հուշման» բացակայության դեպքում սովորողները հաճախ դժվարանում են կողմնորոշվել խնդրի լուծման գործիքակազմի ընտրության հարցում: Այս բացը անհրաժեշտ է լրացնել՝ մշտապես ուշադրություն հատկացնելով առաջադրանքի բնույթից դուրս գալով ի սկզբանե լուծման ընդհանուր ճանապարհներ տեսնելու կարողություններ զարգացնելու վրա: Օրինակ, երբ ֆիզիկայի դասընթացում դիտարկվում են բախման կամ ցրման խնդիրներ, չբացառելով ուժային վերլուծության որոշ մոտեցումներ, առաջին հերթին անհրաժեշտ է դիտարկել պահպանման օրենքների կիրառության հնարավորությունը: Ընդ որում, անդրադարձ կատարելով խնդրի պայմաններին և ելնելով բախման բնույթից, կարելի է որոշել, թե ո՞ր օրենքից կամ օրենքներից հնարավոր կլինի օգտվել: Քանի որ բախումների ու ցրումների խնդիրներում համակարգում գործող ներքին ուժերը շատ ավելի մեծ են արտաքին ուժերից, ապա իմպուլսի պահպանման օրենքը կիրառելի է: Լրիվ մեխանիկական էներգիայի պահպանման օրենքն ունի ավելի սահմանափակ կիրառելիություն և դրանից կարելի է օգտվել, եթե բախումն առաձգական է: Այսպիսով՝ ի սկզբանե սովորողը պետք է կողմնորոշվի պահպանման օրենքների կիրառման հարցում: Ապա ցանկալի է նաև մտովի անցում կատարել և դիտարկել ուժային վերլուծության տարբերակը: Վերջինս հնարավոր կլինի իրականացնել, եթե հնարավոր լինի բախման պրոցեսում գաղափար ունենալ փոխազդեցության ուժերի գոնե ուղղությունների մասին: Նման հնարավորություն կա, օրինակ, գնդաձև մարմինների բախման դեպքում, երբ այդ ուժերն ունեն ռադիալ ուղղություններ:

Այսպիսով, մտածողության սահունության բաղադրիչի առկայությունը թույլ է տալիս ընդհանուր անդրադարձի ճանապարհով հնարավորինս զերծ մնալ սխալ կամ փակուղի տանող ճանապարհներից և ընտրել տվյալ առաջադրանքի կատարման համար կիրառելի ու արդյունավետ միջոցներ:

Մտածողության ճկունություն: Ստեղծագործական մտածողության այս բա-

դադրիչի առկայությունը ենթադրում է խնդիրը լուծելիս բազմազան մոտեցումների և ռազմավարությունների կիրառման ունակություն, ուղիղ կապերից հակադարձ կապերի անցում և լուծման ընթացքում հաջողություն չապահովող մոտեցումներից նոր մոտեցումների անցում [3; 4, 8]: Եթե խնդրի համար սովորողը ընտրել է լուծման տարբերակ, ապա ցանկալի է, որ առաջին իսկ դժվարությունից նա չհուսալքվի և որոշակի համառություն ցուցաբերի ու պատշաճ ջանքեր կիրառի այն հաղթահարելու համար: Սակայն եթե չի հաջողվում հաղթահարել առաջացած պատենշն ու լուծել խնդիրը, ճկուն մտածողությամբ օժտված սովորողը չի հրաժարվի խնդիրը լուծելուց և կփորձի վերանայել մոտեցումն ու գտնել նոր մոտեցումներ: Լուծման ընթացքում ի սկզբանե որդեգրած մոտեցումների գնահատումն ու ըստ անհրաժեշտության խնդրի լուծման ռազմավարության փոփոխությունը ստեղծագործական մտածողության ճկունության դրսևորումներ են: Վերջիններիս զարգացման համար ուսուցիչը դասընթացն իրականացնելիս պարբերաբար կարող է գեներացնել և ներկայացնել խնդիրների լուծման նման մոտեցումներ ինչպես նախապես կազմված օրինակների, այնպես էլ դասարանում աշխատելիս ինքնաբերական կերպով առաջացած պատեն առիթների դեպքում: Ճկուն և վարիատիվ մտածողություն զարգացնելու համար կան նաև առաջադրանքների ժողովածուներ, որոնք պարունակում են մասնագետների կողմից տարիների ընթացքում նման խնդիրներ կազմվելու փորձը: Նման հետաքրքիր մաթեմատիկական գրքերից մեկում բերված մի առաջադրանքում շրջանագծի կամայական կետից նրա երկու փոխուղղահայաց տրամագծերին տարված ուղղահայացների և այդ տրամագծերի հատման կետերի հետավորությամբ պահանջվում է որոշել համապատասխան շրջանի մակերեսը [8, 16]: Փորձը ցույց է տալիս, որ այս խնդիրը լուծելու համար աշակերտների մեծ մասը փորձում են օգտվել Պյութագորասի թեորեմից, քանի որ այստեղ առաջանում են ուղղանկյուն եռանկյուններ: Սակայն տվյալների անբավարար լինելու պատճառով նման փորձերը տանում են փակուղի: Այստեղ ուսուցիչը կարող է աշակերտի ուշադրությունը հրավիրել գծագրում առկա ուղղանկյանը, ինչը պատշաճ դիտողականության դեպքում հնարավորություն է տալիս աշակերտին նկատել, որ դրա հավասար անկյունագծերից մեկը իր ունեցած տվյալն է, իսկ մյուսը՝ շրջանի շառավիղը: Եվ այսպես, խնդրի լուծման բանալին գտնված է:

Մտածողության յուրօրինակություն: Սույն բաղադրիչը պայմանավորված է ոչ ստանդարտ, եզակի, անհրաժեշտ գաղափարներ և լուծումներ առաջ քաշելու ունակությամբ [3]: Որոշ իրավիճակներում պրոբլեմի լուծումը չի հաղթահարվում հայտնի ալգորիթմների կիրառման ճանապարհով, և անհրաժեշտություն է առաջանում ցուցաբերել ոչ ստանդարտ մոտեցումներ: Ուսուցման գործընթացում նման իրավիճակների հաճախ կարելի է հանդիպել օժտված երեխաների բացահայտման նպատակով կազմակերպված մրցույթների առաջադրանքներում: Խոսքը հիմնականում վերաբերում է առարկայական օլիմպիադաների խնդիրներին, որոնց լուծումը պահանջում է ոչ միայն խորը գիտելիքներ և գերազանց հմտություններ, այլև շատ դեպքերում յուրահատուկ ու տարբերվող մոտեցումների կիրառում: Հատկանշական է, որ ֆիզիկայի օլիմպիական առաջադրանք-

ները, ի տարբերություն մաթեմատիկայի, հաճախ ընդամենը պահանջում են խորը առարկայական գիտելիքներ, և դրանք կարելի է հաղթահարել գիտելիքների խորացման հաշվին: Ֆիզիկայի դպրոցական օլիմպիադայի շատ խնդիրներ կարելի է լուծել՝ դուրս չգալով դպրոցական իմացության շրջանակից, իսկ խնդիրների որոշ մասն էլ հեշտությամբ հաղթահարելի են ֆիզիկայի ընդհանուր դասընթացի տիրապետման շրջանակում: Այսինքն՝ որոշ խնդիրներ, որոնք դպրոցական ծրագրի շրջանակում լուծելու համար պահանջում են ոչ ստանդարտ մոտեցումներ, ֆիզիկայի ընդհանուր դասընթացի շրջանակում դառնում են ստանդարտ և ենթակա են հայտնի ալգորիթմների կիրառման: Նույնը չի կարելի ասել մաթեմատիկայի վերաբերյալ, որի դպրոցական օլիմպիական առաջադրանքների կատարումը պահանջում է այնպիսի գիտելիքներ, հմտություններ և ոչ ստանդարտ հնարքների կիրառում, որոնք հիմնականում դուրս են ավանդական դպրոցական դասընթացի շրջանակից: Այնուհանդերձ, ֆիզիկայի դժվարին խնդիրները նույնպես հետաքրքիր և օգտակար է լուծել ոչ միայն գիտելիքի ու մաթեմատիկական ապարատի ուժի հաշվին, այլ նաև սրամիտ ու յուրօրինակ գաղափարների կիրառման միջոցով: Դեռ ավելին, երբեմն հանդիպում են եզակի խնդիրներ, երբ շատ բարձր մակարդակի իմացությունն անգամ չի ապահովում խնդրի լուծումը, սակայն հնարամիտ և անսպասելի մի մոտեցում դառնում է խնդրի լուծման բանալի: Որպես օրինակ կարելի է բերել անվանի ֆիզիկոս մանկավարժ Գ. Գրիգորյանի կողմից առաջադրված հետաքրքիր խնդիրը, որը վերաբերում է տարբեր շառավիղներով երկու համասեռ լիքավորված համակենտրոն կիսագնդերի փոխազդեցության ուժի որոշմանը [1]: Ստանդարտ մոտեցման դեպքում այս և նման այլ խնդիրների լուծումը բերվում է էլիպտական ինտեգրալների հաշվման, ինչը լուրջ և գործնականում անհաղթահարելի բարդություն է ոչ միայն աշակերտի, այլև համալսարանական ուսանողի համար: Խնդրի դրվածքն ու լիքների բաշխման համաչափությունը, սակայն, հնարավորություն են ընձեռում ցուցաբերել հնարամիտ մոտեցում և էլեկտրաստատիկ ճնշման գաղափարի օգնությամբ թույլ են տալիս գտնել լուծման ինքնատիպ ճանապարհ:

Ստեղծագործական մտածողության այս բաղադրամասը կարելի է զարգացնել հարմար օրինակների ներկայացման և առաջադրման, ինչպես նաև աշակերտների կողմից ստացված որոշակի դրական արդյունքների խրախուսման ու մոտիվացման ճանապարհով:

Ստածողության ինքնուրույնություն: Ստեղծագործական մտածողության այս բաղադրիչի առկայությունը ենթադրում է նոր գիտելիքներ, խնդիրների լուծման նոր և օպտիմալ ուղիներ գտնելու ունակություններ [3; 4, 11]: Ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցման գործընթացում մտածողության ինքնուրույնությունը զարգացվում է հիմնականում ինքնուրույն աշխատանքների կատարման ընթացքում, որոնք հանձնարարվում են կատարել տանը կամ դասարանում: Երբ ուսուցիչը ներկայացնում է խնդիրների լուծման օրինակներ, պետք է պատշաճ ուշադրություն հատկացնի լուծման ձևի ընտրության հիմնավորմանն ու կիրառելիության սահմաններին: Հաճախ անհրաժեշտ է աշակերտին ներկայացնել քննարկվող օրինակից տարբերվող դեպքերում կիրառված մոտեցումների հնա-

րավորությունների կամ դրանց փոփոխման ու ուրիշ այլ մոտեցումների կիրառման մասին: Հաճախ կարևոր է ներկայացնել, թե ինչու այս խնդիրը կարելի է լուծել նմանաձևով, իսկ մեկ ուրիշը՝ ոչ: Աշակերտին հանձնարարված ինքնուրույն առաջադրանքները շատ թե քիչ տարբերվում են ուսուցչի ներկայացրած օրինակներից և դրանց լուծման ու հետագա հիմնավոր մնացորդային հմտություններ կուտակելու համար օգտակար կլինի, որ ուսուցիչը իր օրինակներում լուսաբանի խնդիրների լուծման բովանդակային հիմքերն ու սկզբունքները և ոչ թե ֆորմալ մեխանիկական ձևերը:

Ներկայումս ստեղծագործական մտածողության ինքնուրույնության ձևավորումն ու զարգացումը խթանող արդյունավետ միջոց է հանդիսանում նախագծային աշխատանքների կատարումը: Նախագծի իրականացման ընթացքում աշակերտները ինքնուրույնաբար որոնում և գտնում են պրոբլեմի լուծման իրենց տարբերակները և այդ ամենը քննարկում են միմյանց ու ղեկավարի հետ: Նախագծային աշխատանքի ավարտական փուլում աշակերտները ներկայացնում են իրենց կատարածը, ինչը զարգացնում է ինքնուրույն կերպով հետազոտական աշխատանքի լուսաբանման շատ կարևոր հմտություն:

Մտածողության ընդգրկունություն: Ստեղծագործական մտածողության այս բաղադրիչի առկայությունը դրսևորվում է գիտելիքների ու պրակտիկայի տարբեր բնագավառների միջև կապեր գտնելու ունակություններով [4, 11]: Հաճախ նման կապեր կարելի է ապահովել գիտության տարբեր բաժինների որոշ կարևոր գաղափարների ու օրինաչափությունների միջև առկա խորքային կամ ֆորմալ համանմանությունների հաշվին: Սա հնարավորություն է ստեղծում միասնական տեսակետից դիտարկել այդ գաղափարներն ու օրինաչափությունները: Ուսուցման մեջ մտածողության ընդգրկունություն ձևավորող կարևոր միջոցներից է ընդհանրացնող կրկնությունների կիրառման պրակտիկան [7]:

Ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցումն իրականացնելիս անհրաժեշտ է հավասարապես կարևորել ինչպես ներառարկայական, այնպես էլ միջառարկայական ինտեգրատիվ կապերը: Այս առումով ներկայումս կարևոր է ՄԹԵՄ ուսուցման զարգացումն ու տարածումը: Վերջինս աշակերտների մոտ ձևավորում է պրոբլեմի լուծմանը միասնական ու համակողմանի մոտեցումներ կիրառելու հմտություններ: ՄԹԵՄ-ը զարգացնում է այն կարևոր գաղափարը, որ յուրաքանչյուր շատ թե քիչ կարևորություն ունեցող իրական խնդիր լուծելու համար չպետք է սահմանափակվել մեկ գիտության շրջանակներով և պետք է ներգրավել գիտության տարբեր ոլորտների գիտելիքներ և միջոցներ: Ստեղծագործական մտածողության ընդգրկունության բաղադրիչի զարգացմանը նպաստում են նաև նախագծային աշխատանքները, քանի որ դրանք վերաբերում են առօրյայում և մարդկային գործունեության տարբեր ոլորտներում առարկայի կիրառություններին և իրական կյանքից վերցված խնդիրների լուծմանը, ինչը հնարավոր է իրականացնել միայն բազմաթիվ գիտելիքների ու հմտությունների միավորման արդյունքում: Օրինակ «Եռանկյունաչափությունը մարդու կյանքում» թեմայով նախագծի կատարման ընթացքում աշակերտները հնարավորություն ունեն բացահայտելու եռանկյունաչափության հիմնական գաղափարների կիրառությունները ֆի-

զիկայում, աստղագիտության մեջ, կենսաբանությունում, ճարտարապետության մեջ և անգամ արվեստում և երաժշտությունում:

Մտածողության խորություն: Մտեղծագործական մտածողության այս բաղադրիչի առկայությունը ենթադրում է երևույթների էության մեջ թափանցելու, դրանց պատճառները բացատրելու և հետևանքները կանխատեսելու, ինչպես նաև անորոշության մեջ լուծումներ փնտրելու ունակություններ [4]: Նշված ունակությունները զարգացնելու համար անհրաժեշտ են կազմել հարուստ բովանդակությամբ համապատասխան առաջադրանքներ, որոնց կատարումը ուսուցման գործընթացը երբեմն վեր է ածում բազմամակարդակ հետազոտական աշխատանքի: Ասվածի ցայտուն օրինակ են հանդիսանում [5] ձեռնարկում քննարկված առաջադրանքները: Դրանցից մեկում օրինակ քննարկված են մի ուղղի երկայնքով դասավորված և միատեսակ զսպանակներով միմյանց ամրացված միանման գնդիկներից բաղկացած մեխանիկական համակարգում տեղի ունեցող շարժումները [5, 30-38]: Առաջադրանքի կատարումը, որը բաղկացած է տասնմեկ կետերից, պահանջում է նախ հետազոտել գնդիկներից մեկի երկայնական և լայնական տատանումները, ապա անցնել գնդիկների համակարգի կոլեկտիվ շարժումների տեսակներին և դրանց որոշ կարևոր ու հետաքրքիր օրինաչափությունների բացահայտմանը, և ապա ի վերջո ակնկալվում է ստացված արդյունքներով բացատրել երկայնական ու լայնական ալիքների տարածման որոշ հիմնական օրինաչափությունները:

Կարծում ենք, որ մտածողության խորություն ձևավորելու համար կարևոր են նաև [6] գրքի առաջադրանքների ռճի խնդիրները: Վերջիններս պահանջում են բացատրություն գտնել բավականին բարդ իրավիճակներում, երբ անհրաժեշտ է առկա բազմաթիվ գործոններից առանձնացնել էականները և որակապես ու քանակապես գնահատել դրանց ազդեցությունը երևույթի ընթացքի վրա: Նշված բոլոր առաջադրանքները կարևոր են նաև նրանով, որ ամբողջովին վերաբերում են մարդու առօրյա կյանքում ու կենցաղում հանդիպող զարմանալի ու հետաքրքիր երևույթների:

Եզրակացություն

Ֆիզիկամաթեմատիկական առարկաների դասավանդման ընթացքում սովորողների մոտ ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը ունի առաջնային նշանակություն: Ելնելով այս կարևորությունից՝ սույն աշխատանքում վեր ենք հանել ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսումնառության ընթացքում ստեղծագործական մտածողության առանձին բաղադրիչների զարգացման հարցը և օրինակների միջոցով ուրվագծել ենք դրա իրականացման որոշ ճանապարհներ: Վերջիններս առնչվում են ինչպես որոշակի դասի խնդիրներին ու դրանց առաջադրման մոտեցումներին, այնպես էլ բնագիտամաթեմատիկական առարկաների ուսուցման արդի ձևերին ու միջոցներին: Կարծում ենք, որ նման մոտեցումների մշակումը անհրաժեշտ է ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցումը պատշաճ մակարդակով իրականացնելու համար և կարող է նպաստել ուսման որակի բարելավմանը:

Գրականություն

1. Գրիգորյան Գ. Վ., Փախչանյան Բ. Ա., Ֆիզիկայի հանրապետական օլիմպիադաներ (1983-2003), Երևան, «Էդիթ Պրինտ», 2003, 224 էջ:
2. Մովսիսյան Ն. Գ., Սովորողների ստեղծագործական մտածողությանը առնչվող մի քանի հարցերի մասին, ՇՊՀ Գիտական տեղեկագիր, 2021, 1, 179-189 էջ:
3. Гатанов Ю. Б. Курс развития творческого мышления. Санкт-Петербург: «Иматон», 1999, 60 с.
4. Калмыкова З. И. Психологические принципы развивающего обучения. Москва: «Знание», 1979, 48 с.
5. Слободянюк, А.И. Очень длинные физические задачи. Минск: Белорусская ассоциация «Конкурс», 2016, 207 с.
6. Уокер Дж. Физический фейерверк. Москва: Мир, 1988, 298 с.
7. Цатурян А. Повторение курса физики как обобщающая модель обучения физике // Известия Российского государственного педагогического университета им. А.И. Герцена. Санкт-Петербург, 2011, с. 141-148.
8. Posamentier A. S., Krulik St. Problem-Solving Strategies in Mathematics: From Common Approaches to Exemplary Strategies, New Jersey: World Scientific, 2015, 163 p.

Формирование компонентов творческого мышления в процессе обучения физике и математике

Манукян Вардан

Резюме

Ключевые слова: развитие, задача, самостоятельность, гибкость, беглость, оригинальность, глубина, полнота

Формирование и развитие творческого мышления учащихся является одной из ключевых проблем современной педагогики. Очевидно, что с точки зрения развития общества наличие творческих личностей является обязательным. Каждый человек обладает определенным уровнем творческого мышления и проявляет его по-своему. Важно, чтобы каждая личность, независимо от уровня развития, осознавал/а и ценил/а необходимость создания чего-то нового. В противном случае генерация новых идей не будет поощряться, что будет тормозить развитие общества. Подчеркивая роль творческого мышления в процессе обучения, педагоги и психологи провели множество важных исследований в этом направлении: была проанализирована сущность творческого мышления, выявлены его структурные элементы, исследованы существенные факторы, влияющие на творческое мышление. Все это делается в основном с психолого-педагогической точки зрения, однако в современных статьях научно-методического характера также подчеркивается важность развития творческого мышления при преподавании различных предметов. В

работе представлены основные структурные элементы творческого мышления, выделенные исследователями в фундаментальных трудах психолого-педагогического характера, и представлены их проявления в процессе обучения математике и физике. Приведены конкретные примеры и сделаны методические акценты, что составляет основную научно-методическую новизну данной работы.

Formation of Components of Creative Thinking in the Process of Teaching Physics and Mathematics

Manukyan Vardan

Summary

Key words: *development, task, independency, flexibility, fluency, originality, depth, completeness*

The formation and development of creative thinking in students is one of the key challenges of modern pedagogy. It is widely recognized that the presence of creative individuals is essential for the progress of a developing society. While creative thinking exists to some degree in every person, it manifests in different ways. It is crucial that every individual, regardless of their level of intellectual development, understands and values the need to create something new. Without this awareness, the generation of new ideas will not be encouraged, ultimately hindering societal advancement. Recognizing the importance of creative thinking in the learning process, educators and psychologists have conducted numerous significant studies in this area. At the same time, the essence of creative thinking has been analyzed, its structural elements have been pointed out, and the essential factors influencing creative thinking have been investigated. This work presents the main structural elements of creative thinking, as identified by researchers in foundational psychological and pedagogical studies, and explores how these elements manifest in the teaching of mathematics and physics. It includes specific examples and methodological insights, which constitute the primary scientific and methodological contribution of this study.

Ներկայացվել է 02. 04. 2025 թ.
Գրախոսվել է 15. 04. 2025 թ.
Ընդունվել է տպագրության 05. 06. 2025 թ.

**Մաթեմատիկայի և ֆիզիկայի դպրոցական դասընթացում հակասող
ենթադրության մեթոդի կիրարկման որոշ առանձնահատկությունների մասին***

Նիկողոսյան Գագիկ

DOI: <https://doi.org/10.58726/27382923-2025.1-139>

Հանգուցային բառեր. ասույթ, ժխտում, բազմություն, լրացում, փուլ, ստեղծագործական մտածողություն:

Նախաբան

ՀՀ-ում անցում կատարելով տասներկուամյա կրթական համակարգի՝ դպրոցական դասընթացում տարբեր առարկաների ծրագրերում կատարվեցին զգալի փոփոխություններ, այն է՝ ավելացան նոր բաժիններ, կամ էլ եղած բաժիններում մատուցվող նյութը դարձավ առավել ընդգրկուն:

Ընդհանուր առմամբ այդ մեծածավալ փոփոխությունները թողել են դրական ազդեցություն, սակայն ցավոք, թե՛ մաթեմատիկայի և թե՛ ֆիզիկայի դպրոցական դասագրքերում գրեթե ներկայացված չեն հիմնարար առարկայական տարբեր սկզբունքներ ու մեթոդներ (օրինակ՝ ինվարիանտի կիրառման մեթոդը, եզրայինի կանոնը, չափայնությունների մեթոդը, պոտենցիալ էներգիայի մինիմումի սկզբունքը և այլն), իսկ եթե անգամ ներկայացված են (ինչպես, օրինակ, 11-րդ դասարանի բնագիտամաթեմատիկական հոսքի հանրահաշվի դպրոցական դասընթացում «Տրամաբանության տարրեր» գլխում՝ հակասող ենթադրության մեթոդը [3]), ապա բավական հակիրճ, այսինքն ֆորմալ առումով ներկայացվում է լոկ բուն մեթոդը և դիտարկվում են այդ մեթոդին վերաբերող մի քանի տիպային պարզ խնդիրներ՝ ամեննին չանդրադառնալով վերջինիս կիրառման մեթոդաբանական հարցերին, կիրառելիության հնարավորություններին: Մինչդեռ, մեր կարծիքով, անհրաժեշտ է մշակել համապատասխան մեթոդական ցուցումներ, որոնք հնարավորություն կտան նախապես կռահել, հասկանալ կոնկրետ խնդրում այս կամ այն մեթոդի կիրառման հնարավորությունը, նպատակահարմարությունն ու արդյունավետությունը, որից հետո առանձնացնել այն գործիքակազմը, որը հնարավորություն կտա տվյալ մեթոդի կիրառմամբ հասնել տիպային կամ ոչ տիպային խնդրի լուծմանը, ասել է, թե այս կամ այն մեթոդի բարենաջող կիրառումը զուգակցել սովորողների մոտ որոնողական ընդունակությունների և ստեղծագործական մտածողության զարգացման պրոցեսին:

Վերոգրյալի համատեքստում կարծում ենք, որ 11-րդ դասարանի բնագիտամաթեմատիկական հոսքի հանրահաշվի դպրոցական դասագրքում նյութի առկա ծավալը հնարավորություն չի ընձեռում աշակերտներին հավուր պատշաճի ընկալելու հակասող ենթադրության մեթոդի էությունն ու կիրառելիության սահմանները: Մինչդեռ հայտնի է, թե որքան լայն կիրառություն ունի այս մեթոդը թե՛

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի ֆինանսական աջակցությամբ՝ 25RG-5C032 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

մաթեմատիկայի և թե՛ ֆիզիկայի դպրոցական դասընթացում, մասնավորաբար, դպրոցականների մաթեմատիկական օլիմպիադաների տարբեր փուլերում հանդիպող ապացուցման և/կամ հերքման շատ խնդիրների լուծման հիմքում ընկած է հենց այս մեթոդի կիրառումը:

Ըստ այդմ, սույն աշխատանքը նվիրված է մաթեմատիկայի և ֆիզիկայի դպրոցական դասընթացում հակասող ենթադրության մեթոդի կիրարկման որոշ առանձնահատկությունների վերլուծությանն ու մեկնաբանմանը, ապացուցման և/կամ հերքման վերաբերյալ տարբեր տիպային և ոչ տիպային խնդիրների լուծման ժամանակ այս մեթոդի բարեհաջող և արդյունավետ կիրարկման հնարավորությունների վերհանմանը, ինչն էլ աշխատանքի գիտամանկավարժական նորույթն է: Ստորև նախապես հակիրճ կներկայացնենք հակասող ենթադրության մեթոդի էությունը, վերջինս կմեկնաբանենք ինչպես ասույթների տեսության, այնպես էլ բազմությունների տեսության գործիքակազմերի ներքո, որից հետո հակասող ենթադրության մեթոդի կիրարկման պրոցեսում կառանձնացնենք հիմնական փուլերը և կմեկնաբանենք յուրաքանչյուր փուլի էությունը: Վերջում այդ ամենը կկիրառենք ապացուցման և/կամ հերքման տարբեր մաթեմատիկական և ֆիզիկական խնդիրների լուծման ժամանակ:

Հակասող ենթադրության մեթոդի էությունը:

Մեթոդ բառը ունի հունական ծագում և թարգմանաբար նշանակում է նպատակին հասնելու միջոց, ճանապարհ, եղանակ և ուղի: Այն տրամաբանական տեղեկատվություն սահմանվում է որպես բնության, հասարակության, մտածողության երևույթների ու օրինաչափությունների ուսումնասիրությանն ուղղված կանոնների ու հնարքների համակարգ [7]:

Առհասարակ, ապացուցման մեթոդներն, ըստ տանելու եղանակի, դասակարգվում են ուղիղ և անուղղակի (ոչ ուղիղ) տեսակների [1]:

Ապացույցը, որը հիմնված է ինչ-որ անտարակուսելի սկզբի վրա, որից անմիջականորեն արտածվում է թեզիսի ճշմարիտ լինելը, կոչվում է ուղիղ ապացույց:

Ապացույցը կոչվում է անուղղակի (ոչ ուղիղ), եթե թեզիսի ճշմարիտ լինելը հիմնավորվում է թեզիսին հակադիր պնդման ճշմարտացիության հերքման միջոցով:

Անուղղակի ապացուցման ամենատարածված տեսակը հակասող ենթադրության մեթոդն է, որը գիտամեթոդական գրականության մեջ անվանվում է նաև ապացուցում՝ անհեթեթության հանգեցմամբ [1]: Այս մեթոդի համաձայն՝ նախապես ենթադրում ենք, որ ապացուցման ենթակա ելակետային պնդումը սխալ է: Եթե այս ենթադրությունը տրամաբանական դատողությունների միջոցով հանգեցնում է հակասության, եզրակացնում ենք, որ մեր նախնական ենթադրությունը սխալ է, այսինքն՝ տրված ելակետային պնդումը ճշմարիտ է [1]:

Ասույթների տեսության գործիքակազմի ներքո, հակասող ենթադրության մեթոդի համաձայն, ըստ էության, որևէ A պնդման ճշմարտացիությունն ապացուցելու փոխարեն ապացուցում ենք, որ նրա ժխտումը՝ $\bar{A}$ սխալ է, ինչը համարժեք է ելակետային A պնդման ճշմարիտ լինելուն:

Այս մեթոդի վերաբերյալ իր ուշագրավ և դիպուկ կարծիքն է հայտնել նաև անգլիացի հայտնի մաթեմատիկոս Գոդֆրի Հարոլդ Հարդին: Այսպես, ըստ Հարդիի՝ *հակասող ենթադրության մեթոդը մաթեմատիկայի ամենանրբագեղ գեներերից մեկն է, այն անհամեմատ ավելի գեղեցիկ հնարք է, քան ցանկացած շախմատային գամբիտ, քանզի հաջողության հասնելու համար շախմատիստը կարող է գոհաբերել զինվոր կամ նույնիսկ ֆիզուր, մինչդեռ մաթեմատիկոսը դիմում է ողջ «պարտիան» պարտվելու ռիսկին* [8]:

Դասավանդման տարիների փորձառությունը վկայում է, որ սովորողը, ով առաջին անգամ ծանոթանում է հակասող ենթադրության մեթոդի էությանը, տարակուսանք է հայտնում առ այն, թե ի՞նչ տարբերություն, ես ապացուցելու եմ որևէ պնդման ճշմարտացիությունը թե վերջինիս ժխտման սխալ լինելը, միևնույնն է, եթե մեկը կարողանամ ապացուցել, ինքնաբերաբար մյուսն էլ կապացուցեմ և կարծես խիստ թերահավատորեն է մոտենում այս մեթոդի կիրառման արդյունավետությանը: Առաջին հայացքից այդպիսի հարցադրումը կարծես իր մեջ ճշմարտության թվացյալ հատիկ պարունակում է, քանզի ասույթների տեսության գործիքակազմի ներքո հակասող ենթադրության մեթոդի համաձայն որևէ *A* ելակետային պնդման ճշմարտացիությունն ապացուցելու փոխարեն ապացուցում ենք, որ նրա ժխտումը՝ *Ā* սխալ է, և կարծես երկու դեպքում էլ հիմքում գործ ունենք նույն *A* պնդման հետ. ելակետում՝ ուղիղ տեսքով, իսկ մեթոդի կիրարկման ընթացքում՝ ժխտված տեսքով:

Մինչդեռ, երբ հակասող ենթադրության մեթոդը մեկնաբանենք բազմությունների տեսության գործիքակազմի ներքո, ապա բոլորովին այլ պատկեր կունենանք: Այսպես, եթե, օգտվելով գիտական ճանաչողության հայտնի համանմանության մեթոդից, ելակետային *A* պնդման միշտ ճշմարիտ լինելը համադրենք ունիվերսալ բազմության հետ, իսկ հակասող ենթադրության արդյունքում ձևավորված *Ā* պնդման միշտ կեղծ լինելը (այսինքն, ապացուցելու համար, որ գոյություն չունի մի այնպիսի իրավիճակ, դեպք, երբ *Ā* պնդումը ճշմարիտ է) համադրենք դատարկ բազմության հետ, ապա միանգամայն հասկանալի կլինի, որ այս երկու դեպքերում մենք գործ կունենանք բոլորովին տարբեր բազմությունների հետ (մասնավորապես, ուղիղ տեսքով ելակետային պնդման դեպքում քննարկման ենթակա բազմությունը կլինի ունիվերսալ բազմությունը, իսկ հակասող ենթադրության մեթոդի կիրարկման ընթացքում ձևավորված ժխտված տեսքով պնդման դեպքում՝ դատարկ բազմությունը):

Հակասող ենթադրության մեթոդի կիրարկման փուլերը:

Ինչպես արդեն նշել ենք, դասավանդման տարիների փորձառությունը վկայում է, որ սովորողը, ով առաջին անգամ ծանոթանում է հակասող ենթադրության մեթոդի էությանը, խիստ թերահավատորեն է վերաբերվում վերջինիս արդյունավետությանը՝ գործնականում կարծելով, որ նա միևնույն բարդությանն ու դժվարությանն է բախվելու թե՛ ուղիղ տեսքով որևէ պնդման ճշմարիտ լինելն ապացուցելու համար, թե՛ հակասող ենթադրության մեթոդի կիրարկման արդյունքում ժխտված պնդման կեղծ լինելը ապացուցելու համար: Այս առումով, թյուր-

ըմբռնումներից խուսափելու համար, որպես մեթոդական ցուցում, կարծում ենք, որ նախ անհրաժեշտ է հակասող ենթադրության մեթոդի կիրարկման գործընթացը բաժանել միմյանցից հստակ տարանջատված չորս հիմնական փուլերի, այնուհետև անհրաժեշտ է մեկնաբանել այդ փուլերի էությունը: Այսպես, ապացուցման և/կամ հերքման խնդրում որևէ A պնդման ճշմարտացիությունը հակասող ենթադրության մեթոդի կիրառմամբ ապացուցելու համար.

I փուլ-ենթադրության փուլ՝ կատարում ենք ապացուցման ենթակա ելակետային A պնդմանը հակասող ենթադրություն, այսինքն՝ ենթադրում ենք, որ տեղի ունի $\bar{A}$ պնդումը,

II փուլ-հակասության հանգելու փուլ՝ նախորդ փուլի արդյունքով, այսինքն ենթադրելով, որ տեղի ունի $\bar{A}$ պնդումը, փորձում ենք տրամաբանական դատողությունների միջոցով հանգել հակասության,

III փուլ-եզրակացության փուլ՝ նախորդ երկու փուլերի արդյունքով, այսինքն ենթադրելով, որ տեղի ունի $\bar{A}$ պնդումը և հանգելով հակասության՝ եզրակացնում ենք, որ A պնդումը տեղի ունենալ չի կարող (այսինքն՝ եզրակացնում ենք, որ $\bar{A}$ պնդումը կեղծ է),

IV փուլ-ապացուցման փուլ՝ ի նկատի ունենալով տրամաբանությունից հայտնի երրորդի բացառման օրենքը [2] (համաձայն որի՝ ցանկացած A ասույթի դեպքում անպայման ճշմարիտ է կամ A -ն, կամ նրա ժխտումը՝ $\bar{A}$ -ը), նախորդ փուլի արդյունքով (այսինքն՝ հիմնավորված համարելով, որ $\bar{A}$ պնդումը կեղծ է), ապացուցված ենք համարում, որ ելակետային A պնդումը ճշմարիտ է:

Չեշտ է նկատել, որ վերոնշյալ փուլերից երեքը՝ I, III և IV փուլերն ունեն ֆորմալ բնույթ և բուն ապացուցման և/կամ հերքման «բեռը» ծանրանում է II փուլում: Անհրաժեշտ է հստակ ընդգծել, որ հակասող ենթադրության մեթոդն ըստ էության ապացույցը տանելու եղանակ է, փուլերի կարգավորված հաջորդականություն, որոնց բարեհաջող ընթացքի դեպքում անվերապահ կհանգենք ելակետային խնդրի լուծմանը՝ պնդման ապացույցին, սակայն փուլերի բարեհաջող ընթացքն ապահովելու համար (մասնավորապես, երկրորդ փուլում հակասության հանգելու համար) հակասող ենթադրության մեթոդը մեզ ոչնչով օգնել չի կարող: Ահա սա է, որ երբեմն սովորողների մոտ բերում է թյուր ըմբռնման և տպավորություն է ստեղծվում, որ ինքնին հակասող ենթադրության մեթոդի կիրարկումը պետք է ապահովի խնդրի բարեհաջող լուծումը: Ամենաինչ՝ Պետք է հստակ շեշտել, որ II փուլում լոկ տրամաբանական դատողությունների և/կամ այլ հնարքների, սկզբունքների, մեթոդների կիրառման արդյունքում է միայն հնարավոր դառնում հանգել հակասության և, դրանով իսկ, ապահովել հակասող ենթադրության մեթոդի բարեհաջող կիրարկումը: Այսինքն, եթե մեզ չի հաջողվում II փուլում տրամաբանական դատողությունների միջոցով հանգել հակասության, ապա ըստ էության հակասող ենթադրության մեթոդը դառնում է անարդյունավետ և/կամ անկիրառելի:

Ըստ էության, II փուլի բարեհաջող ավարտն է ի վերջո ապահովում

հակասող ենթադրության բուն մեթոդի հնարավոր և արդյունավետ կիրառումը:

II փուլը ոչ միայն կողմնորոշիչ է բուն մեթոդի բարեհաջող կիրարկման տեսանկյունից, այլ նաև ունի մեծ նշանակություն սովորողների իմացական և ստեղծագործական կարողությունների զարգացման համար: Հենց II փուլն է, որ զարգացնում է սովորողների վերլուծական-համադրական ունակությունները, դիտարկելու, կռահելու, եզրակացություններ անելու կարողությունները, վերջիններիս մղում ստեղծագործական գործունեության: Այս փուլում է, որ աշակերտը պատիվ սովորողից վերածվում է անկախ մտածողի և տրամաբանորեն հիմնավորված դատողությունների ինքնուրույն կիրառողի, ինչի արդյունքում նա ձեռք է բերում ինքնավստահություն և հաջողակ լինելու զգացողություն:

Կարծում ենք՝ ապացուցման և/կամ հերքման տարբեր խնդիրներում հակասող ենթադրության մեթոդի ըստ փուլերի կիրարկումը կնպաստի թե՛ մեթոդի իմաստավորված յուրացմանը և թե՛ մեթոդի կիրարկման բարեհաջող ընթացքի ապահովմանը, քանզի փուլերի հստակ տարանջատումը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր փուլում հստակեցնել անելիքը (այսինքն՝ կշռադատել և հասկանալ, թե ինչից պետք է սկսել և ինչով պետք է ավարտել տվյալ փուլը) և փորձել կատարել այն:

Հակասող ենթադրության մեթոդի կիրառումը ապացուցման և/կամ հերքման մաթեմատիկական որոշ խնդիրներում

Ստորև կդիտարկենք մաթեմատիկայի դպրոցական դասընթացում հանդիպող ապացուցման և/կամ հերքման որոշ խնդիրներ, որոնց լուծման ընթացքում անմիջականորեն կօգտվենք հակասող ենթադրության մեթոդից:

Խնդիր 1: Ապացուցել, որ 2025×2025 չափերի քառակուսային աղյուսակի վանդակներում հնարավոր չէ տեղադրել -1 ; 0 և 1 թվերն այնպես, որ բոլոր տողերի, սյուների և անկյունագծերի վրա դասավորված թվերի գումարները լինեն միմյանցից տարբեր [6]:

Լուծում: Պնդումն ապացուցենք հակասող ենթադրության մեթոդի կիրառմամբ: Ունենք ապացուցման ենթակա ելակետային A պնդում, այն է՝ *2025×2025 չափերի քառակուսային աղյուսակի վանդակներում հնարավոր չէ տեղադրել -1 ; 0 և 1 թվերն այնպես, որ բոլոր տողերի, սյուների և անկյունագծերի վրա դասավորված թվերի գումարները լինեն միմյանցից տարբեր:*

I փուլ-ենթադրության փուլ՝ կատարում ենք ապացուցման ենթակա ելակետային A պնդմանը հակասող ենթադրություն, այսինքն՝ ենթադրում ենք, որ տեղի ունի A պնդումը, այսինքն՝ *2025×2025 չափերի քառակուսային աղյուսակի վանդակներում հնարավոր է տեղադրել -1 ; 0 և 1 թվերն այնպես, որ բոլոր տողերի, սյուների և անկյունագծերի վրա դասավորված թվերի գումարները լինեն միմյանցից տարբեր:*

II փուլ-հակասության հանգելու փուլ՝ նախորդ փուլի արդյունքով, այսինքն ենթադրելով, որ տեղի ունի A պնդումը (այն է՝ *2025×2025 չափերի քառակուսային աղյուսակի վանդակներում հնարավոր է եղել տեղադրել -1 ; 0 և 1 թվերն այնպես, որ բոլոր տողերի, սյուների և անկյունագծերի վրա դասավորված թվերի գումար-*

ները լինեն միմյանցից տարբեր), փորձենք տրամաբանական դատողությունների միջոցով հանգել հակասության:

Ունենք 2025 հատ տող, 2025 հատ սյուն և 2 հատ անկյունագծի և, ուրեմն, հնարավոր գումարների քանակը $2025 + 2025 + 2 = 2052$ է: Այս հնարավոր գումարները դիտարկենք որպես «ճագարներ»:

Ըստ խնդրի պայմանի՝ յուրաքանչյուր տողում, սյունում կամ անկյունագծի վրա պետք է դասավորված լինեն 2025 հատ թվեր, որոնցից յուրաքանչյուրը կարող է լինել $-1; 0$ կամ 1 , հետևաբար որևէ տողում, սյունում կամ անկյունագծի վրա դասավորված թվերի գումարը կարող է լինել $-2025; -2024; \dots; -3; 2; -1; 0; 1; 2; 3; \dots; 2024$ կամ 2025 : Ըստ այդմ, յուրաքանչյուր տողի, սյան կամ անկյունագծի վրա դասավորված թվերի գումարի այս հնարավոր տարբերակներն էլ դիտարկենք որպես «վանդակներ»: Պայմանավորվենք յուրաքանչյուր «ճագար»-գումար տեղադրել թվապես իրեն հավասար «վանդակում»:

Հեշտ է նկատել, որ վերոգրյալի արդյունքում կունենանք $2 \cdot 2025 + 1 = 2051$ հատ «վանդակներ» և 2052 հատ «ճագարներ», հետևաբար, Դիրիխլեի սկզբունքի համաձայն, կգտնվի այնպիսի «վանդակ», որում կլինեն առնվազն երկու «ճագարներ», այսինքն՝ գոյություն կունենան երկու «ճագար»-գումարներ, որոնք գտնվում են նույն «վանդակում» կամ որ նույնն է, գոյություն կունենան երկու գումարներ, որոնք միմյանց հավասար են:

Ստացված արդյունքը հակասում է մեր այն ենթադրությանը, որ 2025×2025 չափերի քառակուսային աղյուսակի վանդակներում հնարավոր է եղել տեղադրել $-1; 0$ և 1 թվերն այնպես, որ բոլոր տողերի, սյուների և անկյունագծերի վրա դասավորված թվերի գումարները լինեն միմյանցից տարբեր, այսինքն հանգել ենք հակասության:

III փուլ-եզրակացության փուլ՝ նախորդ երկու փուլերի արդյունքով, այսինքն ենթադրելով, որ տեղի ունի $\overline{A}$ պնդումը և հանգելով հակասության, եզրակացնում ենք, որ $\overline{A}$ պնդումը տեղի ունենալ չի կարող (այսինքն՝ եզրակացնում ենք, որ $\overline{A}$ պնդումը կեղծ է), ասել է թե՛ կեղծ է այն պնդումը, համաձայն որի՝ 2025×2025 չափերի քառակուսային աղյուսակի վանդակներում հնարավոր է տեղադրել $-1; 0$ և 1 թվերն այնպես, որ բոլոր տողերի, սյուների և անկյունագծերի վրա դասավորված թվերի գումարները լինեն միմյանցից տարբեր:

IV փուլ-ապացուցման փուլ՝ ի նկատի ունենալով տրամաբանությունից հայտնի երրորդի բացառման օրենքը, նախորդ փուլի արդյունքով ապացուցված ենք համարում, որ ելակետային A պնդումը ճշմարիտ է, այսինքն՝ 2025×2025 չափերի քառակուսային աղյուսակի վանդակներում հնարավոր չէ տեղադրել $-1; 0$ և 1 թվերն այնպես, որ բոլոր տողերի, սյուների և անկյունագծերի վրա դասավորված թվերի գումարները լինեն միմյանցից տարբեր, ինչն էլ պահանջվում էր ապացուցել:

Հավելենք, որ խնդիր 1-ի լուծման առաջարկվող մոտեցումը հնարավորություն է տալիս կատարել ընդհանրացում և համանման դատողություններով, հա-

կատող ենթադրության մեթոդի անմիջական կիրառմամբ (օգտվելով նաև Դիրիխլեի սկզբունքից) ապացուցել, որ ցանկացած k բնական թվի դեպքում kxk չափերի քառակուսային աղյուսակի վանդակներում հնարավոր չէ տեղադրել -1 ; 0 և 1 թվերն այնպես, որ բոլոր տողերի, սյուների և անկյունագծերի վրա դասավորված թվերի գումարները լինեն միմյանցից տարբեր:

Խնդիր 2: Տրված է իրական թվերի ինչ-որ եռյակ-բազմություն: Յուրաքանչյուր քայլում թույլատրվում է $\{a; b; c\}$ եռյակ-բազմությունից կազմել $\{a'; b'; c'\}$ նոր եռյակ-բազմություն այնպիսին, որ

$a' = a; b' = \frac{\sqrt{2}}{2}(b+c); c' = \frac{\sqrt{2}}{2}(b-c)$: Ապացուցել, որ այդպիսի գործողությունների արդյունքում որոշակի վերջավոր քայլերից հետո հնարավոր չէ իրական թվերի $\{\sqrt{2}; 1; 1+\sqrt{2}\}$ եռյակ-բազմությունից ստանալ $\left\{2; \sqrt{2}; \frac{1}{\sqrt{2}}\right\}$

եռյակ-բազմությունը [6]:

Լուծում: Պնդումն ապացուցենք հակասող ենթադրության մեթոդի կիրառմամբ: Ունենք ապացուցման ենթակա ելակետային A պնդում, այն է՝ *որոշակի վերջավոր քայլերից հետո հնարավոր չէ իրական թվերի $\{\sqrt{2}; 1; 1+\sqrt{2}\}$ եռյակ-*

բազմությունից ստանալ $\left\{2; \sqrt{2}; \frac{1}{\sqrt{2}}\right\}$ եռյակ-բազմությունը, եթե յուրաքանչյուր

քայլում թույլատրվում է $\{a; b; c\}$ եռյակ-բազմությունից կազմել $\{a'; b'; c'\}$

նոր եռյակ-բազմություն այնպիսին, որ $a' = a; b' = \frac{\sqrt{2}}{2}(b+c); c' = \frac{\sqrt{2}}{2}(b-c)$:

I փուլ-ենթադրության փուլ՝ կատարում ենք ապացուցման ենթակա ելակետային A պնդմանը հակասող ենթադրություն, այսինքն ենթադրում ենք, որ տեղի ունի $\overline{A}$ պնդումը, այսինքն՝ *որոշակի վերջավոր քայլերից հետո հնարավոր է իրական թվերի $\{\sqrt{2}; 1; 1+\sqrt{2}\}$ եռյակ-բազմությունից ստանալ*

$\left\{2; \sqrt{2}; \frac{1}{\sqrt{2}}\right\}$ եռյակ-բազմությունը, եթե յուրաքանչյուր քայլում թույլատրվում է

$\{a; b; c\}$ եռյակ-բազմությունից կազմել $\{a'; b'; c'\}$ նոր եռյակ-բազմություն

այնպիսին, որ $a' = a; b' = \frac{\sqrt{2}}{2}(b+c); c' = \frac{\sqrt{2}}{2}(b-c)$:

II փուլ-հակասության հանգեղն փուլ՝ նախորդ փուլի արդյունքով, այսինքն ենթադրելով, որ տեղի ունի $\overline{A}$ պնդումը (այն է՝ *որոշակի վերջավոր քայլերից*

